

**ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ**

**ԱՉՔԻ ԳԵՐԱՆԻ ԵՒ  
 ՇԻՒՂԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ  
 ՄԱՍԻՆ**

**ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ**

Ընթացիկ տարուան Սեպտեմբեր ամսուան շրջանին, մամուլի եւ հեռուստատեսիլի հաղորդումներէն մօտէն հետեւեցանք թուրքիոյ Վարչապետ Ռեճեփ Թայիփ Էրտողանի, վերջերս միջերկրականեան կարգ մը մահմետական երկրներու շարքին մասնաւորապէս Սուրիա եւ ապա Եգիպտոս տուած այցելութիւններուն:

Իմ ամուսնով 6.3 քրիլիոն հսկայական տնտեսութեան տէր եւ աշխարհի մօտաւորապէս 22 տոկոսը կազմող աւելի քան մէկ ու կէս միլիարդ բնակչութիւն հաշուող մահմետական տարածուն աշխարհի վրայ, որ շահարկման հսկայ աղբիւր էր, Ռեճեփ Թայիփ Էրտողան նախաձեռնած էր որոգայթներով լեցուն գործընթացի մը: Ան պէտք էր շահեր այդ աշխարհի ժողովուրդներու ամբողջական, վստահութիւնը: Պարտ էր դառնալ կարեկից, հարազատ, բարեկամի պաշտպան՝ միջազգային քաղաքականութեան մէջ: Աշխատէր արաբական աշխարհի առաջնորդ դառնալու պայմաններ ստեղծել այդ տարածաշրջանէն ներս: Առիթներով ան շատ անգամներ, Իսրայէլը ամբաստանած էր ցեղասպան երկիր, որուն գոհ դարձած էին իր իսկ գնահատումով բազմահազար պաղեստինցիներ:

Արաբական աշխարհի երկիրներէն ներս տեղի ունեցող իշխանափոխութիւններու նամբուն ան արձանագրող ներքին պառակտումներն ու տեղի ունեցող արիւնահեղութիւնները՝ հրաշալի առիթներ էին Վարչապետ Ռեճեփ Թայիփ Էրտողանի, տագնապահար մահմետական արաբ ժողովուրդներուն՝ եղբայրաբար մօտենալու ու անոնց հակաիսրայէլեան պայքարին իր թիկունքը տալու, կարեւոր շահերու համար անոնց վստահութիւնը:

Էրտողան շուտով ափ առաւ Սուրիա, Նախագահ Ասատի հարազատ եղբայր իբրեւ թելադրութիւններ կատարելու անոր, որ ընթացք տայ իր ընդդիմադիր ժողովուրդի պահանջին. ան պէտք էր հրաժարեր նախագահութենէն: Էրտողանի՝ Սուրիա այցելութեան գլխաւոր նպատակը սիրաշահիլ էր իշխանութեան դէմ ըմբոստացած, իշխանափոխութիւն պահանջող եւ որպէս թէ օրական տասնեակներով գոհեր տուող Սուրիոյ ժողովուրդը: Այդ նախաձեռնութեամբ այցելութեան ընթացքին, Ռեճեփ Թայիփ Էրտողան, իրաւունք կուտար ինքզինքին, անգամ՝ սպառնական ժամկէտներ սահմանելու նախագահ Ասատի հրաժարականին կա-

**ՀԱԿԻ ՆՏԱՑՈՅՑԸ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ  
 ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿՐԱՅ ԿԸ ՇԱՐՈՒՆԿՈՒԻ  
 ԿՈՂՄԵՐԸ Կ'ԱՄԲԱՍՏԱՆԵՆ ԶԻՐԱՐ՝ ԵՐԿԵՕՍՈՒԹԵԱՆ  
 ԶԱՆՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**



Նստացոյցի մասնակիցները Ազատութեան հրապարակի վրայ

Հոկտեմբեր 30-ին, Երեւանի Ազատութեան հրապարակին վրայ տեղի ունեցած Հայ Ազգային Գոնկորէսի (ՀԱԿ) հերթական հանրահաւաքէն ետք, Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան յայտարարեց որ, ընդառաջելով ինքնաբերական ժողովուրդի ցանկութեան, տեղի պիտի ունենայ մէկ շաբաթ տևող նստացոյց՝ նոյն

հրապարակի վրայ: Նստացոյցի ու այս առթիւ տեղի ունեցող ամէնօրեայ հանրահաւաքներու 5-րդ օր՝ Չորեքշաբթի Հոկտեմբեր 5-ին, ՀԱԿ-ի համակարգող Լեւոն Զուրաբեան «Ազատութիւն» ռատիոկայանին յայտնած է որ, Գոնկորէսը այլեւս սպասելու ոչինչ չունի իշխանու-

Շաբ.բ էջ 5

**ՈՒՐՈՒԿՈՒԱՅԻ ՄԷՋ ԿԸ ՀԻՄՆՈՒԻ ՀԱՅՈՑ  
 ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ**



Ձախէն աջ՝ ԸՆԿ. Տիէկօ Գարամանուկեան, ծերակուտական Միչիլիմի եւ ԸՆԿ. Լիւիս Ապրազեան

Հոկտեմբեր 3-ին Օրէնսդրական Պալատէն ներս, Ուրուկուայի Բազմամիութեան կազմակերպութեան երկու ներկայացուցիչներ՝ ՄԳՀԿ Կեղրոնի անդամ ԸՆԿ. Տիէկօ Գարամանուկեան եւ ՄԳՀԿ Վարիչ Մարմինի ատենադպիր ԸՆԿ. Լիւիս Ապրազեան, հանդիպում ունեցած են Մերակուտական Ռաֆա-

լէլ Միչիլիմիի հետ, որ հեղինակն է օրէնքի այն նախագիծին, որ կը յանձնարարէ Մշակոյթի նախարարութեան, Հայ համայնքի հետ գործակցաբար, Մոմթէվիտոյի մէջ հիմնելու Հայոց Ցեղասպանութեան Թանգարան:

**ՄԻՋՆՈՐԴՆԵՐԸ  
 ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԱԾ  
 ԵՆ ԻՐԵՆՑ ԾՐԱԳԻՐԸ**

ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համա-նախագահները Սեպտեմբեր 29-ին Վարշաւոյ մէջ կայացած հանդիպումներու ժամանակ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանին եւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիևին ներկայացուցած են իրենց աշխատանքային ծրագիրը՝ յռաշիկայ ամիսներու համար, մինչեւ Վիլնիւսի մէջ Դեկտեմբերին կայանալիք ԵԱՀԿ-ի նախարարներու խորհուրդի հանդիպումը:

Համաձայնագրային Ռոբերդ Պրադկէ, Պեռնար Ֆասիէ եւ Իգոր Պոպով իրենց տարածած յայտարարութեան մէջ կը յայտնեն, որ նախ Ալիևի, ապա Սարգսեանի հետ քննարկած են Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ կարգաւորման ուղղուած հետազոյ քայլերը:

«Համաձայնագրային վերահաստատեցին նախագահներ Մեդվեդեւի, Օպամայի եւ Սարկոզիի՝ Մայիս 26-ի Տովլիլի յայտարարութեան մէջ ստանձնած յանձնառութիւնը՝ օժանդակելու կողմերուն նման կարգաւորման համելու հարցով», - ըսուած է միջնորդներու յայտարարութեան մէջ:

Միջնորդները կ'առաջարկեն բոլոր կողմերուն հրադադարի ամրապնդման, տեղական միջնորդի բարելաւման եւ տարածաշրջանի ժողովուրդներու միջեւ փոխըմբռնման խթանման միտուած յաւելեալ միջոցառումներ:

**ԹՇՆԱՄԻԻ ԿՐԱԿԷՆ  
 ԶՈՐՈՒԱԾ Է  
 ՄԵԿ ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐ,  
 ԿԻՐԱՒՈՐՈՒԱԾ ԵՐԿՈՒ**

Հայաստանի Պաշտպանութեան Նախարարութեան տարածած հաղորդագրութեան համաձայն, Հոկտեմբեր 5-ին դարաբաղա-ատրպէյճանական զօրքերու շփման գիծին վրայ, հակառակորդի կողմէ արձակուած կրակոցին պատճառաւ, գլուխէն ստացած հարուածով զոհուած է գինձառայող, 1987 թուականի ծնունդ՝ Եուրի Արամի Սարգսեանը:

Նոյն օրը, Տաւուշի մարզի Չինարի գիւղի մօտ, թշնամի դիպուկահարի կրակէն վիրաւորուած են գինձառայողներ՝ Հենրիկ Ռաֆիկի Խաչատրեան (ծնած 1992-ին) եւ Խաչատուր Հրանդի Սուքիասեան (ծնած 1992-ին):

Ըստ հայկական լրատուամիջոցներու, ՀՀ Չինուած ուժերը պատժիչ գործողութիւններ ձեռնարկելով հակառակորդի դէմ, ոչնչացուցած են երկու ատրպէյճանցի գինձառայողներու:

# ՇՈՒՋՕՐԵԱՅ ԱԿՑԻԱՆ ԵՒ ԸՆԴՈՒՆԿԱՐՆԵՐԸ

## ՅԱԿՈԲԻԱՆ ԴԱՆԵԱՆ

Շուրջօրեայ հանրահավաք անցկացնելու ընդդիմութեան որոշումը թէեւ ձեռնարկ չի ընդունուած է երեք տարի առաջուկ վաղեմութեան Փետրուարը, այդուհանդերձ բովանդակութեամբ ակցիան բոլորովին այլ է: Դա նաեւ տրամաբանական է, քանի որ բոլորովին այլ է ժամանակն ու միջավայրը: Այդ իմաստով, ակցիան ինչ որ առումով նաեւ աննախադէպ է, քանի որ տեղի է ունենում ամենեւին ոչ հետընտրական տրամաբանութեամբ:

Այն կարելի է համարել նախընտրական, սակայն դա էլ յարաբերական է, քանի որ ակցիան նախընտրական է ոչ թէ ժամանակահատուածի, այլ դրա մասնակիցների դրած պահանջի տրամաբանութեան առումով. ինչպէս յայտնի է, Կոնգրէսը պահանջում է արտահերթ ընտրութիւն:

Միւս կողմից, պահանջելով արտահերթ ընտրութիւն, Կոնգրէսը յայտարարում է որ դա իր համար «անբեկանելի» պահանջ չէ եւ այդ հարցում պատրաստ է շարունակել իշխանութեան հետ երկխօսութիւնը, եթէ իշխանութիւնն ընդառաջ գնաց Կոնգրէսի այլ պահանջներին, որոնք արդէն հիմնականում կրում են սոցիալական բնույթ:

Բայց, անկասկած է, որ Կոնգրէսը խուսափելով հրապարակային մաքսիմալիզմից, այդուհանդերձ կարող է յրնթացս փոխել պահանջների տրամաբանութիւնը, եթէ իշխանութիւնը չընդառաջի առարկայական երկխօսութեան պահանջին կամ առաջարկին, եւ եթէ շուրջօրեայ հանրահավաքները հասարակութեան զգալի մասի մօտ առաջացնեն ոչ թէ գոլտ քաղաքական շոուի հետաքրքրութիւն, այլ

քաղաքացիական ակցիայի շահագրգռութիւնը:

Անկասկած է, որ շուրջօրեայ հանրահավաքները պարունակում են այդպիսի շահագրգռութեան պոտենցիալ: Բայց ամէն ինչ կախուած է նրանից, թէ այդ պոտենցիալը որքանով «կը բացի» ընդդիմութեան ղեկավարութիւնը: Այդ առումով, շուրջօրեայ հանրահավաքների անհրաժեշտ լրացում է դիտում այն գաղափարը, որ հան-

պարագայում, այդ յայտարարութիւնը հնչում է բոլորովին այլ քաղաքական համատեքստում: Դա չափազանց կարեւոր գործօն է լինելու շուրջօրեայ հանրահավաքների արդիւնաւէտութեան համար: Բանն այն է, որ դրանց ընթացքում Կոնգրէսը թերեւս պէտք է ոչ միայն կոալիցիոն պատուիրակութեան եւ նախագահի աշխատակազմի հետ երկխօսի, այլ նաեւ ընդդիմադիր դաշտում գործող քաղաքական ու-

**Կոնգրէսը բերելու պէտք է ոչ միայն կոալիցիոն պատուիրակութեան եւ նախագահի աշխատակազմի հետ երկխօսի, այլ նաեւ ընդդիմադիր դաշտում գործող քաղաքական ուժերի եւ նաեւ քաղաքացիական միաւորների:**

**Ընդ որում, Կոնգրէսը պէտք է այդ երկխօսութիւնը վարի ոչ թէ վերադասի «տոնով», այլ «հաւասարը հաւասարի հետ» սկզբունքով, ինչպէս պահանջում է**

րահավաքի ընթացքում հնչեց Կոնգրէսի համակարգող Լեւոն Զուրաբեանի ելույթում. «Մենք այսօր ունենք այդ պատմական գործը կատարելու բացառիկ շանս եւ չունենք այդ շանսը կորցնելու որեւէ բարոյական իրաւունք: Սա Հայ Ազգային Կոնգրէսի պայքարը չէ, սա համազգային խնդիր է: Ուստի մենք կոչ ենք անում բոլոր նրանց, ով մի գուցէ եւ չեն համակրում Հայ Ազգային Կոնգրէսին, բայց տեսնում են այս շարիքի յաղթահարման անհրաժեշտութիւնը, մի կողմ դնել քաղաքական հակասութիւնները եւ միանալ այստեղ հաւաքուած ժողովրդին»:

Այդպիսի յայտարարութիւններ Կոնգրէսի հանրահավաքների ընթացքում էլի են հնչել, սակայն ներկայիս իրավիճակում՝ շուրջօրեայ հանրահավաքների մեկնարկի

ժերի եւ նաեւ քաղաքացիական միաւորների:

Ընդ որում, Կոնգրէսը պէտք է այդ երկխօսութիւնը վարի ոչ թէ վերադասի «տոնով», այլ «հաւասարը հաւասարի հետ» սկզբունքով, ինչպէս պահանջում է իշխանութիւնից: Բանն այն է, որ քաղաքական համակարգ-հակակարգը մի կողմ պէտք է դնեն ոչ միայն այն ուժերը, որոնք Կոնգրէսից դուրս են եւ գան միանալ ժողովրդական պայքարին, այլ նաեւ Կոնգրէսը պէտք է մի կողմ դնի իր քաղաքական համակարգ-հակակարգը եւ օպտիմալ քաղաքական առաջարկներ անի իր կառուցից դուրս գտնուող ուժերին եւ խմբերին: Առանց դրա, առարկայական միասնականութիւն չի ստացուի, իսկ այդ դէպքում զգալիօրէն անորոշ է, թէ կը ստացուի արդեօք «կազմա-

քանդել աւագակապետութիւնը»:

Շուրջօրեայ հանրահավաքների մարտավարութիւնը պէտք է գուզակցուի այդ համախմբման մտայնացման ուղղութեամբ կոնկրետ քայլերով: «Յաջողութեան հասնելու միակ երաշխիքը զանազան ուղղութեան ղեկավարական շարժումն է, որում կը համախմբուեն հասարակութեան բոլոր առողջ ուժերը», յայտարարեց Կոնգրէսի համակարգողը:

Գրեթէ անվիճարկելի միտք: Մնում է, որ Կոնգրէսը վերանայի առողջ ուժերի մասին իր «սահմանած» չափանիշներն ու պատկերացումները եւ դադարի «այլ ուժերի» առողջութեան գլխաւոր չափանիշ դիտարկել Կոնգրէսի անախալկանութեան եւ առաջնորդութեան անվերապահ ճանաչումը: Քաղաքական յայտարարութիւնն արուած է, եթէ դրան յաջորդեն նաեւ այդ յայտարարութեանը սպասարկելուն միտուած առարկայական քայլերը, ապա քաղաքական եւ քաղաքացիական յաջողութիւնը թերեւս հնարաւոր կը լինի համարել երաշխաւորուած:

Այստեղ իհարկէ շատ բան կախուած է նաեւ իշխանութիւնից, որովհետեւ կասկած չկայ, որ իշխանութիւնը եթէ անգամ մտածի խնդրի ուժային լուծումների մասին, այդուհանդերձ դրանք կը պահի որպէս ծայրայեղ միջոց, առաւել եւս, որ դրանց արդիւնաւէտութիւնը շատ կասկածելի է, եւ կը փորձի աւելի շատ գտնել քաղաքական լուծումներ: Եւ այդ իմաստով իշխանութիւնն էլ անկասկած իր առաջարկները կը փորձի անել թէ Կոնգրէսին, թէ բոլոր այն ուժերին, որոնց հետ կարող է համատեղ քննարկումներ անել Կոնգրէսը:

«ԼՐԱԳԻՐ»

## «ՈՒՎԻՐՈՎԿԱ» ԵՒ «ԻՆՎԵՐՍԻԱ»

### ԱՐԱՄ ԱՐԱՆՆԱՄԵԱՆ

Որքան ես դէմ էի, որ քաղաքականութիւն վերադառնայ Լեւոն Տէր-Պետրոսեանը, որն, իմ կարծիքով, պէտք է մնար առաջին նախագահի, մտաւորականի եւ գիտնականի՝ իր համար շահեկան կարգավիճակում, այդքան կողմ եմ, որ քաղաքական դէմք դառնայ Ռոբերտ Քոչարեանը: Չեմ ստուծ՝ «վերադառնայ», որովհետեւ նա երբէք քաղաքականութեան մէջ չէր: Սկսած Ստեփանակերտի Մետաքսի գործարանի պարտկոմութիւնից՝ նա ապարտապիւն, վարչական գործիչ էր, ինչն ինքնին վատ բան չէ, բայց, միւս կողմից՝ բաւարար չէ երկիր ղեկավարելու համար: Այդ պաշտօնին նրան նշանակեց Վազգէն Սարգսեանը, եւ երկրորդ նախագահն ունեցաւ բաւականաչափ ճկունութիւն եւ խորամանկութիւն, որ կարողանայ իր դիրքը պահպանել 10 տարի:

Պարոն Քոչարեանը հնարաւորութիւն ստացաւ դրսեւորելու իր կազմակերպչական եւ «խարդաւանքային» ունակութիւնները, բայց երբէք չէր կանգնել գոլտ քաղաքական որակները դրսեւորելու անհրաժեշտութեան առաջ, երբէք ստիպուած չէր ոեւէ մէկին համոզելու, որ հենց ի՞ր արտաքին եւ ներքին քաղաքական ծրագրերն են ճիշտ, որ ի՞ր դաւանած

գաղափարախօսութիւնն է տանելու Հայաստանը զարգացման ուղղութեամբ: Հակառակը՝ նրա իշխանութեան օրօք հնարաւորինս նսեմացուել են քաղաքական կուսակցութիւնները, նրանց գործունէութիւնը գրեթէ պաշտօնապէս ներկայացուել է որպէս դատարկ ժամավաճառութիւն, իսկ «իմ կուսակցութիւնը իմ ժողովուրդն է» գեղեցիկ, բայց անիմաստ կարգախօսով խորացուեց այն անսահման ցինիզմը, որը կար եւ առայսօր էլ կայ մեր հասարակութեան մէջ:

Այսօր թէ Ռոբերտ Քոչարեանը, թէ ցանկացած այլ գործիչ ստիպուած կը լինեն խաղալ քաղաքական դաշտում. ինչպէս է այստեղ իրեն դրսեւորելու երկրորդ նախագահը, շատ հետաքրքիր է: Այնպէս որ, եթէ կան «հասարակական շերտեր», որոնք կ'ուզենային տեսնել պարոն Քոչարեանին ակտիւ քաղաքականութեան մէջ, ես հաստատ այդ «շերտերի» մէջ եմ:

Ուրիշ հարց, որ մեր հասարակական կարծիքը, ասես, գուրկ է երեւակայութիւնից եւ լիդերի իր փնտուտքը շարունակում է երեք հոգու մէջ, որոնք ղեկավարել կամ ղեկավարում են մեր երկիրը: Եթէ Ռուսաստանում տեղի

է ունեցել փոխատեղում («ուկիր-րովկա»), ապա մեզանում հասարակական քննարկումները պտտում են հետադարձ շարժման («ին-վերսիայի») մէջ՝ առաջին-երկրորդ-երրորդ-երկրորդ-առաջին նախագահներ:

Պարզ է, որ քաղաքական եւ տնտեսական նոմենկլատուրայի ներկայ ներկայացուցիչները բացայայտ կամ թաքուն ձեւերով համախմբուած են նրանց շուրջը, եւ, ի դէպ, նրանք երեքի դէպքում էլ կը յարմարուեն իրավիճակին եւ մի կտոր հացի կարօտ չեն մնայ: Բայց Հայաստանում ներկայումս ստեղծուած իրավիճակը պահանջում է ոչ ստանդարտ, նորարարական մօտեցումներ: Մասնաւորապէս, «X, հեռացի՞ր, Y, մօտեցի՞ր, Z, վերադարձի՞ր» շարժումն այնքան մտածելակերպը պէտք է իր տեղը գիշի իրական հասարակական պահանջներին եւ, եթէ ուզէք, պատուէրներին, որոնք մի կողմից՝ իրատեսական, միւս կողմից՝ գուրկ կը լինեն բոլոր քաղաքական ուժերին քիչ թէ շատ յատուկ երեսպաշտութիւնից: Այսօր իշխանութեան եւ ընդդիմութեան կողմից հրամայող կարգախօսները չունեն այդ գովելի որակները:

«ԱՌԱԻՕՏ»

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
 ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ՝  
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝  
 SOPEA. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝  
 ԳԱՐԻԷԼ ՄՈՒՆՅԵԱՆ  
 ՍԱՐԱԿ ԹՈՒԹՅԵԱՆ  
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹՅԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
 ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**  
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104  
 Phone: (626) 797-7680  
 Fax: (626) 797-6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
 http://www.massisweekly.com  
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)  
 Published Weekly  
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:  
 USA \$50.00, \$80.00 (First Class)  
 Canada \$120.00 (Air Mail)  
 Overseas \$225.00 (Air Mail).  
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
 at Pasadena CA.  
 Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

ՀԱՅԱՍՏԱՆ

«ՔՈՉԱՐԵԱՆԸ ՈՒՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՈՒՆՔԸ».- ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ

Ռոբերդ Քոչարեանը ունի քաղաքականություն վերադառնալու բարոյական եւ քաղաքական իրաւունքը: Այս մասին յայտարարել է Բարգաւաճ Հայաստան կուսակցութեան (ԲՀԿ) առաջնորդ Գագիկ Ծառուկեանն անդրադառնալով խօսակցութիւններին, թէ Ռուսաստանում Վլադիմիր Պուտինի նախագահ դառնալով պայմանաւորուած, քաղաքականութիւն կարող է վերադառնալ նաեւ Ռոբերդ Քոչարեանը:



ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկեան

«Ես գարմանում եմ, որ անկախութեան 20-րդ տարեդարձը նշող հասարակութիւնը այդպիսի պարզունակ հետեւութիւններ է անում: Կարծում եմ, որ ժամանակն է, որ մենք հոգեբանօրէն էլ մեզ անկախ զգանք, հակառակ դէպքում լիարժէք պետականութիւն չենք կառուցի», - ասել է նա:

Ինչ վերաբերում է Սերժ Սարգսեանի հետ իր յարաբերութիւնների մասին, հարցին, նա պատասխանել է. «Շատ նորմալ եւ աշխատանքային», իսկ ՀԱԿ-ի շխառնութիւն երկխօսութեան մասին էլ ասել է. «Ես կարծում եմ, որ երկիրը ցնցումներից զերծ պէտք է պահել: Ես ողջունում եմ եւ գործող նախագահին, եւ առաջին նախագահին, որ երկրի կայունութիւնը կարողացան վեր դասել ամէն ինչից, եւ մեզ մօտ չկրկնուեցին ոչ աղբբեջանական, ոչ էլ վրացական սցենարները: Յիշենք, թէ այդ երկրները երբ կորցրեցին իրենց տարածքները»:

Անդրադառնալով գալիք խորհրդարանական ընտրութիւններին, Գագիկ Ծառուկեանն ասել է. «Ես նշեցի, որ մեր երկրում վիճակը այնպիսին է, որ ոչ ոք միայնակ չի կարող Հայաստանը դուրս բերել այս իրավիճակից: Մեզ օդի ու ջրի պէս անհրաժեշտ է ոչ թէ մեխանիկական, այլ բովանդակային հա-

մախմբում, եւ այդ իմաստով մենք չպէտք է փնտռենք ներքին թշնամիներ: Կոնկրետ «Բարգաւաճ Հայաստան» իր առջեւ ինչի է դրել այդ համախմբողի դերը ստանձնել, որպէսզի 2012 թուականին մենք իրաւամբ կարողանանք դնել նոր Հայաստանի բարգաւաճման հիմքը»:

Հարցին, թէ գալիք ընտրութիւններին Բարգաւաճ Հայաստանը պատրաստուած է միայնա՞կ մասնակցել, թէ՞ կողալիցիայի միասնական ցուցակով, ԲՀԿ առաջնորդն արձագանքել է. «Ես մի քանի անգամ նշել եմ, որ «Բարգաւաճ Հայաստանը» միայնակ է գնալու ընտրութիւններին՝ ձեւաւորելով սեփական ցուցակը: Միւս կողմից, ես կրկին ուզում եմ շեշտել, որ այս վիճակից դուրս գալու համար երկրին անհրաժեշտ է աւելի մեծ կոնսոլիդացիա, համախմբում, քան նոյնիսկ այսօրուայ կողալիցիան է: Հաւատացե՛ք, որ երկիրը այս վիճակից դուրս բերելու համար մենք պէտք է ստեղծենք այնպիսի միջոցառում, որտեղ չեն լինի թշնամիներ եւ հակառակորդներ: Եւ կոնկրետ ես համոզուած եմ, որ սա է իրականութիւնը եւ շարժուելու եմ հենց այդ սկզբունքով»:

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆ ԱՅՅԵԼԵԼ Է ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ

Հայաստանում Գերմանիայի դեսպան Հանս Եոհեն Ծմիդտն Հոկտեմբերի 3-ին, այցելել է Ազատութեան հրապարակ, որտեղ շուրջօրեայ հանրահաւաքներ է անցկացնում Հայ ազգային կոնգրէսը: Նա հանդիպել է Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանին: Նշենք, որ նախկինում եւս Գերմանիայի դեսպանն այցելել է ՀԱԿ-ի հանրահաւաքներին, ինչը տարբեր մեկնաբանութիւնների առիթ էր տուել քաղաքական շրջանակներում:



Գերմանիայի դեսպան Հանս Եոհեն Ծմիդտ

Յատկանշական է, որ օրերս Սիվիլիթիաս հիմնադրամի կազմակերպած քննարկումների ժամանակ Հանս Եոհեն Ծմիդտը յայտարարել էր, որ Հայաստանում ներկայ բարդ իրավիճակը Լեւոն Տէր-Պետրոսեանից ստացած ժառանգութիւն է: Նրա խօսքով, այն գործընթացները, որոնք հանգեցրել են տնտեսութեան օլիգոպոլիզացման, ծնուել են հենց այն տարիների քաղաքականութեան արդիւնքում:

«Ես յաճախ եմ Հայաստանի առաջին նախագահի հանրահաւաքներում լսել, թէ նա ինչպէս ա է քննադատում բոլոր ընտրութիւնները եւ բոլոր իշխանութիւններին: Ես նրա խորհրդատուներից մէկին հարցրեցի, թէ ինչ

կասի այն ընտրութիւնների մասին, որոնց մասնակցել է Տէր-Պետրոսեանը, թէ ինչ կասի 1994-97 թթ դէպքերի մասին, ինչին նա պատասխանեց, որ ես սխալ տեղեկութիւններ ունեմ: Այդուհանդերձ, պէտք է այնքան անկեղծ լինել, որ ընդունել քննադատութիւնը», - ասել էր դեսպանը:

Այդուհանդերձ, դեսպանի եւ Լեւոն Տէր-Պետրոսեանի գրոցը, ըստ ներկաների, ջերմ տպաւորութիւն է թողել, թէ եւ որոշ ականատեսներ էլ նշում են, որ ՀՀ առաջին նախագահը խիստ է խօսել դեսպանի հետ:

«ՀԱԿ-Ն ԱՄԵՆ ԲԱՆ ԱՐԵՑ, ՈՐ ԸՆԴԴԻՍԱԴԻՐ ՄԻՒ ՈՒԹԵՐԻՆ ԹՇՆԱՄԱՑՆԻ ԻՐ ՀԵՏ»

Լեւոն Տէր-Պետրոսեանի յայտարարութիւններում լուրջ հակասութիւններ կան: Այս մասին Հոկտեմբերի 3-ին, մամուլի ասուլիսում յայտարարել է «Ժառանգութիւն» կուսակցութեան փոխնախագահ Ռուբէն Յակոբեանը: Նրա խօսքով, այդ հակասութիւններից մէկն այն է, որ ՀԱԿ-ի առաջնորդը սկզբում յայտարարում է, որ երբեք չեն հաւատացել, որ երկխօսութիւնն արդիւնք կը տայ եւ նոյնիսկ առկախեցին երկխօսութեան գործընթացը՝ որպէս պատճառ բերելով ՀԱԿ ակտիւիստի ձեռքաւարութիւնը, իսկ հիմա կրկին յայտարարում է, որ միեւնոյն է, ՀԱԿ-ը գնալու է երկխօսութեան եւ դիմել է ՀՀԿ-ին:



«Ժառանգութիւն» կուսակցութեան փոխնախագահ Ռուբէն Յակոբեան

Այնուհետեւ, Ռ. Յակոբեանն անդրադարձել է ՀԱԿ-ի՝ ընդդիմադիր ուժերին ուղղուած կոնգրէսին միանալու առաջարկին, նշելով, որ վերջին ժամանակաշրջանում ՀԱԿ-ն ամէն բան արել է որ թշնամանայ ընդդիմադիր դաշտի այլ ուժերի հետ: «Ես չեմ կարծում, որ նման առաջարկից յետոյ, իրեն յարգող որեւէ ուժ կարող է գնալ ու միանալ ՀԱԿ-ին», - ասաց նա, նշելով, որ առաջարկութիւն անելու համար գոյութիւն ունեն արարողակարգային եւ էթիկայի

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԸ ՄԵԿՆԱՐԿԻ ՍԱՐԴԱՅԱՍԱՐ

Հոկտեմբերի 12-ին հանրապետութիւնում կը մեկնարկի մարդահամարը: Այս առնչութեամբ, Հոկտեմբերի 3-ին, տեղի է ունեցել Հայաստանում 2011թ. անցկացուելիք մարդահամարի նախապատրաստման եւ անցկացման համապետական յանձնաժողովի նիստ, որը վարել է յանձնաժողովի նախագահ, ՀՀ փոխվարչապետ Արմէն Գէորգեանը: Քննարկուել է Հոկտեմբերի 12-ին մեկնարկող մարդահամարի նախապատրաստական աշխատանքների ընթացքը:



անցկացմանը: Նա նաեւ շնորհակալութիւն է յայտնել միջազգային եւ տեղական կազմակերպութիւններին՝ գործընթացին օժանդակելու համար, ինչպէս նաեւ Հայ առաքելական եկեղեցուն՝ իրազեկման աշխատանքներին աջակցութեան պատրաստակամութեան համար: Փոխվարչապետը նշել է, որ անհրաժեշտ պայմաններն ապահովուած են՝ գործընթացի բնականոն իրականացման համար եւ յոյս յայտնել, որ միջոցառումը կ'անցկացուի կազմակերպուած:

ՏԿՆ մամուլի ծառայութիւնից NEWS.am-ին յայտնում են, որ Ազգային վիճակագրական ծառայութեան նախագահ Ստեփան Մնացականեանը ներկայացրել է կատարուած աշխատանքների վերաբերեալ ամփոփ տեղեկատուութիւնը: Ա. Գէորգեանը յորդորել է բոլոր պատասխանատու կառույցների ներկայացուցիչներին՝ աջակցել գործընթացի պատշաճ մակարդակով կազմակերպմանն ու

ՎԻԿՏՈՐ ԴԱԼԼԱՔԵԱՆ. «ԱՌԱՋԻԿԱՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ Կ'ԱՌԱՆՁՆԱՆԱՆ ԲԱՒԱԿԱՆԻՆ ՍՈՒՐ ԻՆՏՐԻԳՈՎ»

Առաջիկայ խորհրդարանական եւ նախագահական ընտրութիւնները կ'առանձնանան բաւականին սուր ինտրիգով, որը կ'արտայայտուի Հայաստանի՝ երեք նախագահների իշխանութեան համար պայքարով: Այդ մասին, Հոկտեմբերի 4-ին, Ազգային ժողովում յայտարարեց անկուսակցական պատգամաւոր Վիկտոր Դալլաքեանը:

Սարգսեանը դեկավարել են ԼՂՀ Պաշտպանութեան եւ ԼՂՀ ինքնապաշտպանութեան ուժերի կոմիտէները: Ինտրիգն այն է, որ Հայաստանի անկախութեան 20-րդ տարում առաջին նախագահը ձգտում է վերականգնել 1998 թվականին կորցրած իշխանութիւնը, երկրորդը ձգտում է ռեւանշի, երրորդն էլ փորձում է դիմակայել այդ ամէնին», - յայտարարեց Դալլաքեանը:

«Երեք նախագահները ժամանակին ակտիւ մասնակցել են դարբանաշարի շարժմանը: Առաջինը՝ Լեւոն Տէր-Պետրոսեանը, եղել է «Ղարաբաղ» կոմիտէի նախագահ: Երկրորդ եւ երրորդ նախագահները Ռոբերդ Քոչարեանն ու Սերժ

Սարգսեանը դեկավարել են ԼՂՀ Պաշտպանութեան եւ ԼՂՀ ինքնապաշտպանութեան ուժերի կոմիտէները: Ինտրիգն այն է, որ Հայաստանի անկախութեան 2012 թվականի Մայիսին, իսկ նախագահական ընտրութիւնները՝ 2013 թվականին ֆետրուարին:

ԼՈՒՐԵՐ

ԼԻԲԱՆԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ. «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԻՆՔՐ ՊԵՏՔ Է ՈՐՈՇԻ ԻՐ ԱՊԱԳԱՆ»

Լիբանանը ցանկանում է, որ պէսզի թուրքիան վաւերացնի հայ-թուրքական արձանագրութիւնները, երկու երկրների միջեւ յարաբերութիւնները կարգաւորուեն եւ տարածաշրջանում հաստատուի խաղաղութիւն:



Լիբանանի Խորհրդարանի նախագահ Էլյաս Սաադը և Պարզսեանի հետ հանդիպման ժամանակ ասել է Լիբանանի Ազգային ժողովի նախագահ Նաբիհ Պըրրին:

Այդ մասին Հոկտեմբերի 4-ին, Լիբանանի Խորհրդարանի նախագահ Սերժ Սարգսեանի հետ հանդիպման ժամանակ ասել է Լիբանանի Ազգային ժողովի նախագահ Նաբիհ Պըրրին: Ինչպէս NEWS.am-ի տեղեկացրեցին նախագահի մամուլի ծառայութիւնում, Սերժ Սարգսեանը նշել է, որ հայ ժողովուրդը նրան ծանաչում է որպէս բարեկամի: «Հայ-լիբանանեան յարաբերութիւններն աւանդաբար բարեկամական բնույթ են կրել: Մեզ միաւորում են ինչպէս մեր պատմամշակութային ընդհանրութիւնները, այնպէս էլ հայ համայնքի առկայութիւնը Լիբանանում: Այդ յարաբերութիւնները մշտապէս պահպանուել ու ամրապնդուել են բարձր մակարդակի քաղաքական այցելութիւններով, եւ մենք Ձեր այցը դիտում ենք այդ համատեքստում»,- ասել է Սարգսեանը՝ խնդրելով նախագահ Միշէլ Սուլէյմանին փոխանցել իր ջերմ ողջոյններն ու բարեմաղթանքները, նաեւ՝ Հայաստան այցի հրաւերի վերահաստատումը:

տնտեսական համագործակցութեան զարգացումը: Նա նշել է, որ Հայաստանի խորհրդարանի նախագահի եւ վարչապետի հետ հանդիպումների ժամանակ այդ հարցերին եւս անդրադարձ է եղել, որոշակի պայմանաւորուածութիւններ են ձեռք բերուել տնտեսական յարաբերութիւններն ակտիւացնելու ուղղութեամբ:


Նախագահ Սերժ Սարգսեանը եւ Լիբանանի ԱԺ նախագահն անդրադարձել են նաեւ տարածաշրջանային խնդիրներին ու արաբական աշխարհում տեղի ունեցող զարգացումներին: Նաբիհ Պըրրին համոզմունք է յայտնել, որ աշխարհի ոչ մի երկրում հնարաւոր չէ խնդիրները կարգաւորել առանց երկխօսութեան:

Խօսելով Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնների մասին՝ Լիբանանի ԱԺ նախագահն ընդգծել է, որ իր երկիրը ցանկանում է, որպէսզի թուրքիան վաւերացնի հայ-թուրքական արձանագրութիւնները, երկու երկրների միջեւ յարաբերութիւնները կարգաւորուեն եւ տարածաշրջանում հաստատուի խաղաղութիւն:

ԼՂ հակամարտութեան կարգաւորման հետ կապուած, Նաբիհ Պըրրին վերահաստատել է դեռեւս 1997 թ. Հայաստան կատարած իր այցի ժամանակ ասածը՝ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն ինքը պէտք է որոշի իր ապագան:

ՍՓԻՌՔԱՅԱՅ ԳՈՐԾԱՐԱՐԸ ՍՊԱՌՆՈՒՄ Է ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼ ԻՐԵՆ ՏՐՈՒԱԾ ՄԵԴԱԸ

Շվեդիայի թագաւորական տեխնոլոգիական ինստիտուտի պրոֆեսոր, շվեդաբնակ Արամայիս Միրզախանեանն իր բողոքն է յայտնել, որ արդէն տարիներ շարունակ Հայաստանի քաղաքացիութեան չի տրուել ժիրայր Սէֆիլեանին եւ Սարգիս Հացպանեանին, ովքեր վաղուց ապրում են Հայաստանում:



Սփիւրքահայ գործարար Արամայիս Միրզախանեան

«Ժիրայր Սէֆիլեանի քաղաքացիութեան իրաւունքի պաշտպանութեան կոմիտէից» NEWS.am-ին յայտնում են, որ այս առնչութեամբ, «Գալա» հեռուստատեսութեանը տուած հարցազրոյցում սփիւրքահայ գործարարը, մասնաւորապէս, ասել է.

«Կայ խտրականութիւն սփիւրքահայութեան նկատմամբ: Կան սփիւրքահայեր, որոնք գտնուում են Հայաստանում եւ ցանկանում են ստանալ ՀՀ քաղաքացիութիւն, բայց չեն ստանում: Ես պէտք է ճշգրիտ անուններով նշեմ. դա ժիրայր Սէֆիլեանն է, Շուշիի առանձնակի գումարտակի նախկին հրամանատարը եւ Սարգիս Հացպանեանը, որը Ղարաբաղում մարտնչած եւ հսկայական օգնութիւն կատարած անձնաւորութիւն է, ֆրանսահայ: Ես այդ մարդու հետ տասնեակ անգամներ եղել եմ Ղարաբաղում: Այս երկու անձնաւորութիւնները բանտարկուել են՝ ժիրայր Սէֆիլեանը 1.5 տարի, Սարգիս Հացպանեանը 2.5 տարի եւ երկուսն էլ ազատ են արձակուել, այսինքն եթէ անգամ նրանք ունեցել են ինչ-որ

մեղք, յանցանք, այն արդէն աւարտուած է եւ այս մարդիկ այսօր ապրում են Երեւանում, բայց նրանց մերժում է տալ ՀՀ քաղաքացիութիւն: Սա ի՞նչ խտրականութիւն է: Դա ինչ-որ մէկի քմահաճոյքն է: Ես որպէս սփիւրքահայ բողոքում եմ եւ պահանջում, որպէսզի այս մարդկանց տրուի ՀՀ քաղաքացիութիւն: Աւելացնեմ նաեւ, որ եթէ այդ երկու անձնաւորութիւններին մօտակայ ապագայում չտրուի ՀՀ քաղաքացիութիւն, ապա ես իմ բողոքը կ'արտայայտեմ նրանով, որ ԼՂՀ «Մայրական երախտագիտութիւն Արցախի քաղաքացիներին» ստացած մեղալը կը վերադարձնեմ ԼՂՀ Նախագահին, որի ձեռքից ի դէպ ստացել եմ այն»:

ՏԱՒՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՍՈՂԱՆՔԻՑ ՓԼՈՒՁՈՒԱԾ ԵՐ ՎԱՆԱՊԱՐՅԸ ԿԱՌՈՒՑՈՒԵԼ ԷՐ ԶԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ



Տաւուշի մարզում տեղի ունեցած սողանքի հետեւանում անյայտ կորել է 7 անձ

Տաւուշի մարզի վանաձոր-Բագրատաշէն ճանապարհին, Հոկտեմբերի 2-ի երեկոյեան՝ ժամը 19.00-ի սահմաններում, տեղի ունեցած սողանքի հետեւանքով անյայտ կորել է 7 անձ: Տուժել է նաեւ 7 մարդ, ովքեր ստացել են առաջին բուժօգնութիւն եւ դուրս են գրուել հիւանդանոցից:

Արտակարգ իրավիճակների նախարարութեան հասարակայնութեան հետ կապերի աշխատակից Գոհար Բաղդասարեանը NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում նշեց, որ 130 մետր երկարութեամբ եւ 60 մետր բարձրութեամբ ամբողջ հողազանգուածը փլուել է:

Սողանքների պատճառները հիմնականում լինում են խոնաւութիւնը, գետի ջրերը, առատ անձրեւները: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում ասաց Տրանսպորտի եւ կապի նախարարութեան տեղեկատուութեան եւ հասարակայնութեան կապերի բաժնի վարչութեան պետ Պետրոս Դեմիրճեանը՝ յաւելելով, որ ճանապարհը վերանորոգուել է 1996-97թթ Համաշխարհային բանկի ֆինանսաւորմամբ:

Այժմ տարածքում աշխատում է 77 փրկարարներ, աշխատանքներ են տարւում՝ տուժածներին գտնելու ուղղութեամբ: Բեռնատարների մեծ մասը, նրա խօսքով, ծածկուած է հողազանգուածով կամ վնասուած է Առայժմ հնարաւոր չէ նշել սողանքի նախնական պատճառը: Գոհար Բաղդասարեանի խօսքով՝ Տաւուշի մարզում սողանքային դօտիները շատ են, նախկինում այդ հատուածում սողանք եղել է, իսկ նախորդ տարի Հաղարծինի մօտ է սողանք եղել:

ԻՐԱՆՈՒՄ ԶԱՅ ԽԱՉԱԳՈՂԵՐԻ ԵՆ ԲՈՆԵԼ

Թեհրանի «Արաքս» շաբաթաթերթը գրում է, որ ոչ պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, ձերբակալուածները կասկածուում են Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ վանքի թալանի գործով: Նոր Ջուղայում տարածուած լուրերի համաձայն, կասկածեալները մէկ միլիարդ ուիալ (մօտ 85 հազար ԱՄՆ դոլար) երաշխիքի դիմաց ազատ են արձակուել:



Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ վանքի թանգարանը

սրբապատկերների լուսանկարներով Լոնդոնում հետաքրքրուողներ են եղել, դրանց արժէքը ճշգրիտ նպատակով: Թեմական խորհուրդը ցայսօր պաշտօնական ոչ մի տեղեկատուութիւն չի հրապարակել ձերբակալութիւնների եւ թալանի կապակցութեամբ ու շարունակում է լուել:

# ԼՈՒՐԵՐ

## ԹՐԲԱԿԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ ՍՈՒՐԻՈՅ ԴԵՄ

Թուրքիոյ վարչապետ Ռաճէպ Թայիպ Էրտողան յառաջիկայ օրերուն կը ծրագրէ այցելել Հաթայի շրջանը (Իսքէնտերուն): Կը նախատեսուի որ ան նոր պատժամիջոցներ յայտարարէ Սուրիոյ դէմ: Քանի որ ի դերեւ ելած էին իր նախկին բարեկամ Պաշար Ասատին կատարած թելադրութիւնները: Արդարեւ Հաթայ ապաստանած սուրիացի քանի մը հազար գաղթականներու ներկայութիւնը առաւել եւս սրած է Անգարայի եւ Դամասկոսի միջեւ եղած լարուածութիւնը:

## ԼԻՊԻՈՅ ԸՆԴԴԻՍԱԴԻՐՆԵՐՈՒ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ ՆՈՐ ՀԱՆԳՐՈՒԱՆՆԵՐՈՒ ԱՌՋԵՒ

Մինչ Լիպիոյ Սըրթ քաղաքը կը մնայ պաշարման վիճակի մէջ, միւս կողմէ ընդդիմադիր ուժերու ղեկավարները յայտարարութիւն մը կատարելով ըսին թէ գնդապետ Կազգաֆիի ծննդավայր Սըրթ քաղաքի ազատագրումէն ետք իրենք պիտի հրաժարին: Այսպիսով անոնք ճամբայ հարթած պիտի ըլլան ժամանակաւոր նոր կառավարութեան մը կազմութեան՝ որ իր հերթին երկրի ղեկը պիտի ստանձնէ մինչեւ խորհրդարանական ընտրութիւնները:

Միւս կողմէ գնդապետ Կազգաֆիի եւ իր երկու զաւակներուն Սէյֆ ալ Իսլամի եւ Մուսթաֆիմ թաքստոցները անյայտ կը մնան:

## ՊԱՐԻՅՆԻ ՍԷՋ 14 ՅՈՒՑԱՐԱՐՆԵՐ ՑԿԵԱՆՍ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԵՑԱՆ

Անցնող ամիսներուն Պահրէյնի մէջ երկրի մեծամասնական շիիթ համայնքի կողմէ կատարուած դեմոկրատական կարգերու ի նպաստ ցոյցերու ղեկավարներ դատավարութիւնն աւարտեցաւ: Զինուորական ատեանն այս կապակցութեամբ 14 հոգիներ ցկեանս բանտարկութեան դատապարտեց: 15 ուրիշներ ալ 15 տարուան դատապարտութեան Պահրէյնի համալսարանին առջեւ կատարած քայքայիչ արարքներու ամբաստանութեամբ: Վեց այլ անձեր եւս 15 տարուան ազատագրկումի ենթարկուեցան, մահուան սպառնալիք կատարած ըլլալու յանցանքով:

## ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐԸ ԶՐԿՈՒԵՑԱՆ, ԻՍՐԱՅԷԼ ՈՉ

Ամերիկեան եւ համաշխարհային տնտեսական ճգնաժամին, ինչպէս նաեւ պահեստիւնեան պատուիրակութեան ՄԱԿ-ի մէջ միջազգային ճանաչման շուրջ ունեցած աշխոյժ գործունէութեան համար ԱՄՆ որոշած է ջնջել Պաղեստինի գաղթականներուն կատարած տարեկան շուրջ 200 միլիոն տոլարի օժանդակութիւնը: Այս որոշումը կրնայ բեկանուիլ եթէ Պաղեստինեան պետութիւնը իր դիրքը փոխէ ՄԱԿ-էն ներս: Այս բոլորին դիմաց՝ զարմանալիօրէն առ այժմ անփոփոխ կը մնայ արտաքին օժանդակութիւններու մեծագոյն գումարներէն մին՝ Իսրայէլի տրուող աւելի քան 3 միլիարտ տոլարը:

## ՀԱԿ-Ի ՆՍՏԱՑՈՅՑԸ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ

Շարունակուած էջ 1-էն

թիւններէն եւ պիտի զբաղուի «ժողովրդի ակտիւացմամբ»:

ՀԱԿ-ի հետ երկխօսութեան նպատակով ձեւաւորուած իշխող կոալիցիայի աշխատանքային խումբը տարածած էր յայտարարութիւն մը, յայտնեց ի համար թէ, ՀԱԿ-ի կողմէ կատարուող անօրինական հաւաքի պայմաններուն տակ, երկխօսութիւնը վերսկսիլը արդիւնաւէտ չի կրնար դառնալ:

«Մենք կը սպասենք այդ անօրինական գործընթացի աւարտին, որից յետոյ կը քննարկենք ՀԱԿ ներկայացուցիչներին հետ մեր հանդիպման մանրամասները», - յայտարարած էին իշխանութեան ներկայացուցիչները:

Ի պատասխան աշխատանքային խումբի այդ յայտարարութեան, ՀԱԿ-ը հանդէս եկաւ պատասխան յայտարարութեամբ, ուր մասնաւորապէս ըսուած էր. - «Հայ Ազգային Կոնգրէսը ներկայ պահին այլեւս անհիմաստ է համարում նման իշխանութեան հետ որեւէ երկխօսութիւն եւ մեր առջեւ դրուած խնդիրները լուծումը այսուհետեւ տեսնում է միայն ժողովրդի մոբիլիզացիայի եւ մեր զանգուածային միջոցառումների ակտիւացման մէջ»:

Հոկտեմբեր 5-ին Ազատութեան հրապարակ այցելեց «ժառանգութիւն» կուսակցութեան հիմնադիր եւ առաջնորդ Բաֆֆի Յովհաննիսեան: Ան մտտեցաւ ՀԱԿ-ի առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանին, որու հետ ունեցաւ առանձին զրոյց:

Իր այցելութեան նպատակի մասին Բաֆֆի Յովհաննիսեան պատասխանելով լրագրողներու հարցերուն ըսաւ. - «Մա մեզ բոլորին պատկանող հրապարակն է, երբ որ ես այստեղ հացադուլ էի 15 օր, դա իմ հրապարակը չէ՞ դա մեզ բոլորին է պատկանում: Ուստի ես եկել եմ իմ համաքաղաքացիների հետ զրուցելու, զօրակցելու»:

Միւս կողմէ, Կենտրոն եւ Նորք-Մարաշ առաջին ատեանի դատարանը բաւարարեց ՀԱԿ-ի երիտասարդներէն Տիգրան Առաքելեանի կալանքի ժամկէտը երկու ամիսով եւս երկարաձգելու՝ Յատուկ քննչական ծառայութեան դիմումը:

Տիգրան Առաքելեան եւ ՀԱԿ-ի վեց այլ ակտիւիստներ ձերբակալուած էին Օգոստոսի 9-ին, ոստիկանութեան հետ ունեցած միջադէպի արդիւնքով:

Այս ձերբակալութիւնները պատճառ դարձան, որպէսզի առկախուի ՀԱԿ-ի իշխանութիւն երկխօսութիւնը:

## ԱՆՑԵԱԼԸ ՄԻԱԿ ԲԱՆՆ Է, ՈՐ ԱՆՅՆԱՐ Է ԽԵԼԸ

Հ. ԱՅՆԱՆ

Հարաւային Կովկասում պատմական գիտութիւններին լուրջ մարտահրաւէր է նետուած: Ինչո՞ւ, որովհետեւ այս գիտութիւնների թեկնածուի կոչում ունի Իլհամ Ալիեւը, իսկ Սուխուმი համալսարանի պատմական գիտութիւնների դոկտոր պրոֆեսոր է Գուրամ Մարխուլիան: Ի դէպ, Մարխուլիան ազգութեամբ վրացի է, հետեւաբար խիստ կասկածելի է այժմ է՞լ նա համարուած է Աբխազիայի կենտրոն Սուխումի համալսարանի դոկտոր, պրոֆեսոր: Բայց սա բոլորովին ուրիշ հարց է, այժմ մեր ինդերի մասին: Ինչպէս տեղեկացնում է «Թրենդ» ատրպէյճանական գործակալութիւնը, եւ ինչպէս վերջինից «մեծ հրճուանքով» մէջբերում է Vesti.az-ը, Պաքուում կայացել է յիշեալ գիտնականի գրքի շնորհանդէսը: Գիրքը վերնագրուած է՝ «Հայերը՝ Հայաստանը որոնելիս»: Անշուշտ վրացի Մարխուլիան գտել է, թէ այդ ինչպէ՞ս եւ ամենակարեւորը՝ որտե՞ղ են հայերը Հայաստան որոնում, ընդ որում այն աստիճան բարձրակարգ կերպով, որ շնորհանդէսին ներկայ Ատրպէյճանի ԳԱԱ պատմութեան ինստիտուտի տնօրէն Յակուբ Մահմուդովը (դատելով անունից՝ նա իրօք որ գտել է իր հայրենիքը), ասել է. «Մարխուլիան ատրպէյճանական ժողովրդի պատմութիւնը ուսումնասիրելու ճանապարհին հանդիպել է հայկական բազմաթիւ ճնշումներին: Սակայն նա շարունակել է իր ուսումնասիրութիւնները մեր ինստիտուտի հետ համատեղ: Ըստ այդմ մենք պարզել ենք, որ հայերը իրենց «Մեծ Հայաստան» տերմինն ապացուցելու համար Հայաստանի որոնման ճանապարհին են: Այդ ճանապարհը անցնում է Բալկաններով, հասնում Հարաւային Կովկաս: Իրականում նրանք այստեղ են եկել ուսանելի օգնութեամբ 1828-ին: Պրոֆեսոր Մարխուլիայի գրքում այս իրադարձութեան բոլոր տարրերը աւելայ են»: Մեր կարծիքով՝ Մահմուդովն իր այս խօսքը կարող

էր սահմանափակել ընդամենը մէկ արտայայտութեամբ՝ «պրոֆեսոր Մարխուլիան աշխատել է մեր ինստիտուտի հետ համատեղ», այս ճշմարտութեան համար Հայաստանի մի հատուածում այժմ ապրող հայերս անգամ նրան կը ծափահարէինք: Իսկ թէ ի՞նչ կապ ունի «Հայերը Հայաստանը որոնելիս» գիրքը «ատրպէյճանական ազգի պատմութիւնը ուսումնասիրելու հետ», թերեւ Մահմուդովն ինքը այնքան էլ լաւ չի հասկացել, նա նաևանդ որ, կրկին դատելով անունից, ինքն էլ լաւ իրազեկուած չէ «ատրպէյճանական ազգի պատմութեանը»:

Ինչեւէ՞ չաւելենք միայն, որ գրքի շնորհանդէսը կայացել է «Ատրպէյճանի հանրապետութիւն-Ատրպէյճանի դեմոկրատական հանրապետութեան պատմական իրաւաջողորդ» միջազգային կոնֆերանսի շրջանակներում: Հետաքրքրական է, այդ կոնֆերանսին ներկայ արտասահմանցի հիւրերից քանի՞նք են «գլխի ընկել», որ Ատրպէյճանի դեմոկրատական հանրապետութիւնը չունէր իր կազմում Ղարաբաղ: Էլ աւելի հետաքրքրական է, թէ քանի՞նք են հասկացել, որ եթէ անգամ հայերին այստեղ «բերել են ուսանելը», ապա որտեղի՞ց: Այդուհանդերձ անգամ մատահոլութիւն կայ, որ միջազգային այդ կոնֆերանսին ներկայ յատկապէս եվրոպացի գիտնականները պիտի որ հասկացած լինեն մէկ այլ բան. եթէ ատրպէյճանցիներն ու թուրքերը միեւնոյն ազգն են, ապա ե՞րբ են յայտնուել թուրքերը Եւրոպայում, եւ ի՞նչ լեզուով ու ի՞նչ է թարգմանաբար նշանակում Ստամպուլը, նախքան թուրքերը՝ Կոստանդնուպոլիսը: Ինչ վերաբերում է Մահմուդովին ու Մարխուլիային, ապա խորհուրդ կը տանք վերջիններս՝ ամուր մնալ իրենց համոզմունքներում, թէ չէ Պաքուում անհաւանական շատ են լինում քամիները. ի՞նչ գիտես մի օր դրանք ո՞ր ժողովրդի ինքնաորոնման պատմութիւնը ուսումնասիրելու կը մղեն զոյգ գիտնականներին:

## ՈՒՐՈՒԿՈՒԱՅԻ ՍԷՋ ԿԸ ՀԻՄՆՈՒԻ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Շարունակուած էջ 1-էն

Ըստ օրէնքի նախագծին, ան նպատակ պիտի հետապնդէ տարածելու եւ բացատրելու Հայ ժողովուրդի դէմ գործադրուած ծանրագոյն ոճիրը՝ 1915 թուականի Յեղասպանութիւնը:

Թանգարանը նաեւ տեղեկութիւններ պիտի հաւաքէ Ուրուկուայի մէջ հայ համայնքի ձեւաւորման եւ հայ մշակոյթի մասին:

Օրէնքի համաձայն, պետութիւնը շէնք պիտի տրամադրէ եւ համապատասխան պիւտձէ յատկացնէ ու նաեւ թոյլ տայ նուիրատուութիւն ստանալու՝ բարձր մակարդակի եւ արհեստավարժ ձեւով թանգարանի գործունէութիւնը

ապահովելու համար:

Մերակուտական Ռաֆայէլ Միչիլինի տեղեկացուեցած է որ, խորհրդարանի բոլոր քաղաքական ուժերը իրենց նախնական հաւանութիւնը տուած են եւ շուտով օրինագիծը պիտի դրուի քուէարկութեան:

Հնչակեան ներկայացուցիչները իրենց անվերապահ աջակցութիւնը յայտնած են ծերակուտականի նախաձեռնութեան եւ շնորհակալութիւն յայտնած են օրինագծի առաջարկման առթիւ:

Յայտնենք որ, ծերակուտական Միչիլինի անցեալին ներկայ եղած ու ելույթ ունեցած է Հնչակեան Քսան կախաղաններու հանդիսութեան առթիւ:



massispost.com  
daily news updates

### ՀԱՅՐԵՆԻ ՌԻՍԱԼՈՂ ՊԱՏԱՆԻ ԲԱՐԵԿԱՄԻՍ

#### ՍԱՀԱԿ ԹՈՒԹՅԱՆ

Իմ հարազատ պատանի բարեկամ,

Քեզ առաջին անգամ նշմարեցի News.am հայաստանեան կայքէջին վրայ ուր ներկայացուած էին Երեւանի Ազատութեան Հրապարակին վրայ 30 Սեպտեմբեր 2011ի գիշերը Հայ Ազգային Գոնիւրէսի հանրահաւաքի մեկնարկը նշող շարք մը ոգեւորիչ տեսանիւթեր: Հոն գիշերելու պատրաստուող հերոսական մասնակիցներն ու անոնց կողմէ հրապարակին վրայ հաստատուած վրանները դիտած պահուստ յանկարծ անշարժացան մատներս, ու նկարիդ սեւեռուած մնացին աչքերս: Դպրոցական վերամուտի քու պատանեկան խաղաղ օրերը անհոգ վայելելու փոխարէն, դուն շատ աւելի կենսական պարտականութեան մը կանչը լսած էիր քու լուսայորդ միտքիդ եւ արթուն խիղճիդ խորերէն: Կոկիկ հագուած էիր՝ բաց գոյն մաքուր կօշիկներով, սեւ գուլպաներով, ծայրերը գուլպաներուն մէջ ամփոփուած կապոյտ տաբատով (ձիշտ այնպէս՝ ինչպէս հասուն այր մարդը, երբ կարեւոր գործ կայ ընելիք), կարմիր բաճկոնակով, եւ աստղագարդ կապոյտ գլխարկով - իսկ ձախիդ՝ դպրոցական թիկնապայուսակը (backpack): Փակ դրան մը սեմին ինքնավստահ նստած էիր գետինը, իսկ ուշիմ աչքերդ յառած էիր ուղիղ դիմացդ:

Լուրջ էր համակ արտայայտութիւնդ - կրնամ ըսել՝ շատ աւելի լուրջ քան ինքնակոչ այն «նախագահը» որու հանցագործութիւնները դատապարտող ժողովրդային հանրահաւաքին քու նշանակալի մասնակցութիւնդ կը բերէիր այդ երեկոյ: Լուրջ էիր, քանի լաւապէս կը գիտակցէիր թէ կը ներկայացնես քու դպրոցական տասնեակ հազարներով ընկերներդ որոնց առջեւ փակուած են դէպի ապագան տանող բոլոր ճամբաները՝ ներկայ յանցաւոր եւ ապիկար իշխանութիւններուն կողմէ:

Դուն ես տէրն ու որոշողը քու ճակատագրիդ, ամպամած կամ պայծառ գալիքիդ, իմ հարազատ քաջարի հայ պատանի: Դուն եւ քու ընկերներդ էք որ պիտի պաշտպանէք հայրենի լքեալ բերդը՝ արտաքին ու ներքին բացայայտ ու ծպտեալ թշնամիներէ: Եթէ մնաք զգաստ եւ արթուն, այնպէս ինչպէս հիմա սա համբուրելի նկարիդ մէջ, ամենադոյզն կասկածը մի ունենաք - վերջապէս ձե՛րն է բազմահազարամեայ հայրենի հրաշքը՝ հուրի եւ սուրի երկարատեւ Գողգոթայէն յետոյ: Աջիդ ու ձախիդ գետին պիտի փռուին՝ քեզ կեղեքող, արիւնաքամող, անկուշտ թալանող ու դեռ իշխանութիւն խաղացող բոլոր մոլորեալները՝ վերէն վար:

Այս ամէնը քուկը ըլլալու սահմանուած է, իմ արիասիրտ հրա՛շք պատանի, միայն մէ՛կ պայմանով - քու հայրենի տանդ, երջանկութեանդ, ապագայիդ մնայուն կերպով տէր պիտի կանգնիս դու՛ն անձամբ ամէն վայրկեան, օրը քսանչորս ժամ, տարին երեք հարիւր վաթսունհինգ եւ՛ քառորդ օր (մտահան չընե՛ս քառորդ օրը): Այս այն սուղ գինն է գոր ժողովուրդի «պարզ» մարդերն ստիպուած են մնայուն կեր-

պով վճարել՝ եթէ կ'ուզեն ազատ եւ արժանավայել ապրիլ իրենց հայրենի տան մէջ, հայրենիքին մէջ:

Մեր կեանքին վրայ բռնութեամբ տիրելէ եւ մեզ ամէն իմաստով մերկացնելէ առաջ, բոլոր բռնապետերը նախ կը ջանան հակակշռել մեր միտքերը: Այս նպատակով անոնք յօրինած են դասական դարձած հնարքներ: Նախ մեզ կը հաւաստիացնեն իրենց բարի նպատակներուն ու ժողովրդանուէր ծրագիրներուն մասին, մեզ կը թմրեցնեն իրենց երփնազարդած վարդագոյն երազներով - եւ այդ դրախտային վիճակը իբր թէ մերն ընելու համար կը պահանջեն որ կուրօրէն իրենց հաւատանք, հետեւինք ու ծառայենք: Ահա թէ ինչու՛ ժամանակակից Հայաստանի մէջ մանրակրկիտ հակակշռի տակ են հաղորդակցութեան բոլոր միջոցները - երթեւեկութեան, լրատուական եւ

այլ կարգի - ասով իսկ ստրկացնելով հայրենիքը: ( Եւ այս ֆաշիստական սովորոյթի երկարաձգման կը սատարեն, դժբախտաբար, շարք մը սփիւռքահայ կազմակերպութիւններ իրենց կարծատես նկատումներով: ) Իշխանութիւնը զաւթած բախտախնդիրները իրենց սեփական ամենանեղ շահին համար իւրացուցած են գանգուածային լրատուական միջոցները - մամուլ, հեռուստացոյց, ռատիօ, համացանց: Անբարտաւանօրէն կը ստեն խօսքով, նկարներով, ցուցադրուածով ու չցուցադրուածով: Իշխանաւորներու յանցագործ գեխութիւնը, կենցաղային շպարն ու խրախճանքները ցոյց կու տան որպէս ժողովուրդի բարօրութիւնը:

Այս խեղկատակութեան առաջին առնելու միակ կերպն է՝ անընդհատ իրազեկել, երկրագունդի եւ մեր անմիջական հայաշխարհի անցուդարձերէն բազմակողմանիօրէն տեղեակ պահել մենք մեզ: Կանխիկ չկլլել մեր միտքե-

րը հեղեղող ներքին եւ արտաքին տեղեկատուութիւնները: Մեր մտային ընկալուչը բաց պահել աշխարհի լուրերուն, բոլոր կողմերու լուրերուն: Իրականութիւնը տեսնելէ չխուսափիլ՝ որքան ալ անհաճոյ ըլլայ: Այլ խօսքով՝ չխրտչիլ վատ լուրերէ: Մանաւանդ զգուշանալ երբ մեծաքանակ ու երկարատեւ մեզի հայթայթուած լուրերը սահուն են, ողորկ: Չապաւինիլ վարպետօրէն կոճկուած ու ճշմարտաման թելերով հիւսուած բացարհեստական, շինծո՛ւ տեղեկանքներէ, իրողութիւններէ եւ ճշմարտութիւններէ: Կասկածիլ մանաւանդ անոնցմէ որոնք մասնագիտական կամ այլատեսակ հեղինակաւոր թօնով կը վստահեցնեն թէ ամէն ինչ յաջող ու պատշաճ կ'ընթանայ Հայաստան աշխարհի, Արցախի եւ Սփիւռքի մէջ:

Նման սթափ մօտեցումը հեշտ բան է: Ժիգ կ'ենթադրէ: Հայ-

Շարք էջ 7

**«ԱԿԱՆՋԻ ԲԵՐ ԱՍԵՄ»**  
**ՅՈՒՇ-ԵՐԵԿՈՅ**  
 Գուրուած  
**ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԻ**  
 Մ Ա Հ Ո Ւ Ա Ն 40-ԱՄԵԱԿԻՆ

Կազմակերպութեամբ՝  
**ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ**



Գլխաւոր Բանախօս՝ **ԱՆԱՀԻՏ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ**, Բանասէր, Գրականագէտ  
 Անձնական Յուշեր Սեւակէն՝ **ԴՈԿՏ. ՄԻՆԱՍ ԳՈՃԱՅԵԱՆ**  
 Խօսք Յիշատակի՝ Երջանկայիշատակ **ՎԱԶԳԵՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ** Ամենայն Հայոց  
 Ասմունք՝ **ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ, ՄՇԵՐ ՄԿՐՏՉԵԱՆ,**  
**ԿԻՄԱ ԴԱԻԹԵԱՆ, ԵԱՀՈՒՄ ՂԱԶԱՐԵԱՆ**  
 Երգ՝ **ՄԵՍՐՈՊ ԹԱՇՃԵԱՆ**  
 Հանդիսավար՝ **ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ**

Տեղի կ'ունենայ  
**ՀԻՆԳՇԱԲԹԻ,**  
**ՀՈԿՏԵՄԲԵՐ 13, 2011**  
 Երեկոյեան ժամը 8:00ին  
 Կլէնտէյլի կեդրոնական գրադարանին մէջ  
 222 East Harvard St., Glendale

**ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ**  
**ՀԻՒՐԱՄԻՐՈՒԹԻՒՆ**



### ԲԱՐԵՒ ԱՐԱՐԱՏԻՆ

Տպաւորութիւններ՝ Վերջերս «Արարատ» բարձրացող եւ իր տարիներու փափաքը իրականացնող մեր սիրելի եւ հայրենասէր ընթերցողներէն Երեմ ժամկոչեանի



Երեմ ժամկոչեան ծնած է Լիբանան 1942 թուականին: Ան ներգաղթած է Հայաստան 1947 թ. իր ծնողքին, քոյրերուն եւ եղբայրներուն հետ: Անոր սէրը հայրենիքին, հայ ժողովուրդին եւ հայ մշակութիւն առաւել եւս աճած է իր երկրորդական ուսման տարիներուն՝ էջմիածնի Գէորգեան ճեմարանէն ներս: Մեծապէս ազդուելով իր ուսուցիչներէն եւ դասախօսներէն իր մէջ մեծ սէր եւ հետաքրքրութիւն յառաջացած է հանդէպ հայ մշակութիւն եւ հայ ժողովուրդի պատմութեան: Մօտ քսան երեք տարիներ առաջ ան փոխադրուած է Միացեալ Նահանգներ իր ընտանիքին հետ: Միշտ երազած է վերադառնալ հայրենիք եւ իր երազը եղած է տեսնել «Կիրիլեան»: «...

Յանկամ տեսնել զիմ Կիրիլիա, աշխարհ որ ինձ ետուր արեւ...»: 2001 թուականին իրականացնելով այդ երազը՝ կ'այցելէ «Կիրիլիա», Պէյլան, Պախճի, Լաբաշ եւ Ամանոսեան լեռնաշղթան: 2008 թուականին ան կ'այցելէ Արեւմտեան Հայաստանի Կարս, Անի, Էրզրում, Մուշ, Պիթլիս, Վան եւ Արտասան քաղաքները եւս՝ իրականացնելով իր մեծ փափաքներէն մին: 2009ին կ'այցելէ Տիգրանակերտ քաղաքը, բարձրանալով մեր նախնիներու սրբավայրը՝ «Նեմրուժ Սար»ը, մեծ յուզմունքով եւ հրճուանքով: Մեծ եղած է անոր սէրը հանդէպ հայ ժողովուրդի հնագոյն մշակութիւն եւ ափսոսանքով ականատես դարձած է այդ քաղաքներու



աւերակներուն: Ան արտայայտուելով իր վերջերս կատարած «Արարատ» լեռ բարձրանալուն կ'ըսէ. «Միշտ ալ ունեցած եմ այդ փափաքը եւ սակայն յարմար առիթը այս տարի էր: Այդքան ալ դիւրին չէր...: Մենք կրցանք 4200 մեթր բարձրանալ երկու օրուայ մէջ, զիշերելով 3200 մեթրի վրայ, վրաններու տակ: Մեզ հետ կային իտալացիներ, հոլլանտացիներ, պարսիկներ եւ գերմանացիներ: Ամենէն փոքրը մեր մէջ Վալէրիան էր, իսկ ամենէն չափահասը ես: Աննկարագրելի էին զգացումներս եւ մեծ էր յուզմունքս: «Սրբութիւն Սրբոց» վայրն էի եւ հայ ժողովուրդի «սիմպոլ»ը հանդիսացող լեռան գագաթը իմ աչքերով կը տեսնէի: Մեծ հիասթափութիւն էր անշուշտ յիշել եւ պահ մը անդրադառնալ որ հիւր էինք այդտեղ, բայց հաւատալով որ մերն է եւ այդ պատկերին կառչելով բարձրացան: Ասիկա ուխտ մըն էր եւ ուխտագնաութիւն մը: Ուրախ եմ

որ այս տարիքիս հասայ այդ սուրբ նպատակին եւ ամէն մէկ հայու երազը անձամբ իրականացուցի: Որպէս վերապրողի գաւակ ես հպարտ եմ իր արմատներով, հայրենիքով եւ հայ ժողովուրդով: Կեանքիս մէջ ամենէն լաւ բանն էր որ այս երազս դարձաւ իրական: Իմ ցանկութիւնս է հայ ժողովուրդը տեսնել միաբան եւ կը հաւատամ որ մեր միասնական ուժը այդ գերագոյն ուժն է որ ամէն ինչ կրնայ յաղթահարել: Պէտք է մէկդի ձգենք մեր անհատական շահերը, եսամտութիւնը եւ նիւթապաշտութիւնը եւ աշխատինք հայրենիքի հօրացման համար: Կ'ողջունեմ բոլոր միութիւնները եւ անհատները որ կը նպաստեն այդ սուրբ գործին եւ կը խոնարհիմ մեր մեծերու յիշատակին: Վարձքը կատար երեմ: Մէրդ անսպառ առ հայրենիք, հայ մշակութիւն եւ հայ ժողովուրդ: Համադրեց Լեւա Մամուկեան

### «ԲԱՋ ՆԱԶԱՐԻ» ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԵՒ ՀԱՇՎԱՆԴԱՍ ԵՐԵՒԱՆԵՐՈՒ Ի ՆՊԱՍՏ 12-ՐԴ ՏԱՐԵԿԱՆ ԹԵԼԵԹՈՆԸ

### ՀԱՅՐԵՆԻ ՈՒՍԱՆՈՂ ՊԱՏԱՆԻ ԲԱՐԵԿԱՄԻՍ

Յարատւող ճիգին առջեւ Չկայ բան մը որ դիմանայ, Դժուարը՝ դիւրին, Անկարելիին հնարաւոր կը դառնայ: Ռ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Ծարուակուած էջ 6-էն

#### ԽԱՋԻԿ ՀԱՆՈՅԵԱՆ

Կիրակի, Հոկտեմբեր 9, 2011, կէսօրէ ետք ժամը 5-էն մինչեւ 11:00, Կլենտէյլէն սփուռող Charter Communication-ի հանրաժանօթ AMGA 380 կայանէն տեղի պիտի ունենայ «Քաջ Նազար» հանդէսի եւ հեռուստաժամի մարդասիրական դրամահաւաքը, ի նպատակ հայաստանի ծնողագուրկ եւ հաշմանդամ երեխաներուն եւ անոնց մանկատուններուն վերանորոգման: Ոչ հասութեաբեր, աստուածահաճոյ այս գործին պիտի կարենան մասնակցիլ Ամերիկայի Միացեալ Նահանգներու ողջ տարածքին ապրող, ինչպէս նաեւ ամբողջ Գանատայի եւ Մեքսիքայի մեր հայրենակիցները եւ ոչ հայեր: 1999-ին խումբ մը գիտակից եւ հայրենասէր ազգայիններ, գլխաւորութեամբ քաղաքիս մէջ լոյս տեսնող «Քաջ Նազար» երգիծական հանդէսի խմբագիր եւ նոյնատուն հեռուստաժամագրի հաղորդավար՝ Յովհաննէս Պալայեանի, հիմը դրին այս սուրբ եւ պատուական գործին: Անոնք ամէն տարի նման թելեթոնով դրամահաւաք կը կազմակերպեն, օգնելու համար Հայաստանի ծնողագուրկ եւ հաշմանդամ երախաներուն, նորոգելով եւ արդ-

իականացնելով անոնց պատասպարանները, տունները: Այս գործին բոլոր պատասխանատուները մեր զաղութի ծանօթ ազգայիններ են, որոնց սիրտը տիւ ու գիշեր կը տրտիէ հայրենիքի եւ հայրենաբնակ ժողովուրդի տրտիւմներով, ուրախութիւններով եւ ցաւերով: Այս հաստատութեան եւ թելեթոնի աշխատանքներով, բազմաթիւ որբեր, հաշմանդամ փոքրիկներ իրենց մանկական երջանկութիւնը գտած են: Անոնք ճակատագրի բերումով որբացած եւ հաշմանդամ եղած են, սակայն այս հայրենակիցներուն աշխատանքով անոնց արցունքները կը սրբուին եւ ուրախութեան ժպիտներու կը վերածուին անոնց դէմքերուն վրայ: Թելեթոնի պատասխանատուներուն նշանաբանն է՝ ոչ մէկ որբ անտէր եւ անօթեան պէտք է ձգենք: Ոչ մէկ հաշմանդամ առանց բուժումի եւ գուրգուրանքի պէտք է որ թողունք: Այսօրուան որբերէն չէք գիտեր ինչէր կրնան ելլել, ինչ գրողներ, մեծանուն գիտնականներ, արուեստագէտներ եւ կղերա-

կաններ կրնան ելլել: Կոչ կ'ընենք մեր թանկագին հայրենակիցներուն, որ բոլորս միասին ազգային վեհագոյն դիտակցութեամբ մասնակցինք Կիրակի, Հոկտեմբեր 9-ի թելեթոնին. մեծատունը՝ իր գանձով, համեստ աշխատողը՝ իր լուծումով, հոգեւորականները՝ իրենց աղօթքներով եւ օրհնութեամբ, մտաւորականները՝ իրենց գրիչով ու խօսքով մասնակից դառնանք այս գործին, գործվագութիւն ծնողներ եւ պաշտպաններ դառնալով հայրենի ծնողագուրկ որբերուն եւ հաշմանդամներուն: Փառք ու հազար պատիւ այս սուրբ գործին իրենց մասնակցութիւնը բերող եւ լուծման ներդնող մեր բոլոր հայրենակիցներուն: \*\*\* Ողջունելով Հայաստանի ծնողագուրկ երեխաներու օգնութեան ֆոնտին 12րդ թելեթոնը, յուսանք որ մեր ժողովուրդը իսկապէս մարդկային պիտի մասնակցի մարդասիրական եւ Աստուածահաճոյ այս դրամահաւաքին: «Մասիս»

Թայթուած տեղեկութիւններն ու ենթադրեալ ճշմարտութիւնները քննարկելն ու բաղդատելը կը պահանջէ ներգործօն վիճակի մէջ պահել միտքը, անկախ մտածելու քաջութիւնն ունենալ, բաւարար ժամանակ տրամադրել: Դեռ, կը պահանջուի խղճամտօրէն մտածել ու խիզախօրէն գործել, «հեղինակաւոր» բիրտ ուժի առջեւ չսարսափիլ ու չքծնիլ, անարդ իշխանաւորներու երեսին պարկեշտօրէն եւ առանց քինախնդրութեան բարձրաձայնել ճշմարտութիւնը - ինչպէս վայել է քեզի որ ազատ տէրն ես Հայաստան աշխարհի եւ իրաւական գերագոյն հեղինակութիւնը անոր ամբողջ տարածքին վրայ: Իր բոլոր պակասներով հանդերձ, Հայաստանի նոր կազմաւորուող քաղաքացիական հասարակութեան ամէնէն խիզախ արտայայտութիւններէն մէկը այս օրերուն կարելի է տեսնել Երեւանի Ազատութեան Հրապարակին վրայ: Եւ այս ամէնը՝ հակառակ անողոք եւ անսկզբունք իշխանութեան մինչեւ ատամները գիտուած գիտեալ գայլերուն: Հայրենիքի տէր ու տիրական իմ հարազատ պատանի բարեկամ, սրտագին ողջոյններս եւ յաջողութեան սրտաբուխ մաղթանքներս՝ քեզի եւ պայքարի բոլոր ընկերներուդ: Յատուկ մաղթանք մըն ալ՝ իմ բարեկամ Նիկոլ Փաշինեանին:

### ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ ԻՅԱԲ(ՊՈԼՍԱՀԱՅ ՀԻՄՆԱՐԿ ԱՆՈՒԱՆԻՆ ՕՓԵՐԱՅԻ ԵՐԳԻՉ ԱԼԻՆԳՈՒԹԱՆ

#### Ք. ՏՐԴԱՏԵԱՆ ԳՈՒՅՈՒՄՁԵԱՆ

- Ձու՛ր, դու ո՞ր պաղճան կ'երթաս, իմ պաղճակ ջրրիկ եւ անուշիկ:
- Ես ի յայն պաղճան կ'երթամ որ պուլուլիւն քաղցր եղանակէ:
- Ձու՛ր, դու ո՞ր աղբիւր կ'երթաս, իմ պաղճակ ջրրիկ եւ անուշիկ:
- Ես ի յայն աղբիւր, երթամ որ գայ քո եարըն ջուր խմէ,
- Դէմ գընամ դունչըն պագնեմ, սիրովըն հապա գինաման:
- Հայ միջնադարեան երգ



Որքան սէրը եւ երգը իրարու միացած են ինչպէս կը տեսնէք այս հայերենին մէջ: Ահա հոս է Ալին Գուլթանին բացառիկ տաղանդը որ սէրը եւ արուեստը միացնելով կը հաղորդէ անպատմելի հրճուանք մը դիմացինին, ունկնդրողին, վայրկեան մը վերացնելով գինք մտգական աշխարհ մը՝ իր գեղեցիկ դէմքով եւ ամենահարապուրիչ ժպիտով:

Ակադեմիկոս-գրականագէտ Սերգէյ Սարինեանը Հայկ Խաչատրեանի «Գրիգոր Մագիստրոսի վերջին թուղթը» պատմավէպի մասին «Պատմութիւնը հազարամեայ գուգահեռում» գրախօսականի վերջում այսպիսի յետգրութիւն ունի. «Համակրանքի եւ մտերմութեան մեր վերջին հանդիպումը եղաւ Հանրագիտարանում: Տրամադրութիւնը բարձր էր, ասաց, որ կ'ուղարկի իր նոր լուստեսած պատմավէպը՝ «Գրիգոր Մագիստրոսի վերջին թուղթը»: Ապա մեր հեռախօսակցութիւնը:

Նոր էր դուրս եկել հիւանդանոցից: Անտրամադիր էր, երեւի ինչ-որ կանխագուշացում ունէր: Ասացի, որ կարդացել եմ վէպը, իսկական յաղթանակ է եւ որոշ իմաստով նորոյթ է ժանրի պատմութեան մէջ: Հաւանաբար հանդէս կը գամ մամուլում: Տարակուսանքի շեշտ զգացի նրա պատասխանում: Ասաց. «Միեւնոյն է՝ մեր օրերում տաղանդն ու միջակութիւնը նոյնարժէք են, ոմանք գրականութիւն են ստեղծում, այլերն արժանանում մրցանակի: Մագիստրոսի պակասն է մեզ տանջում ամէնուրեք ու ամէն բնագաւառում»:

Աւաղ, մինչեւ կ'աւարտէի յղուածս, նա արդէն չկար: Ճակատագիր է, բանաւոր կարծիքը ճանաչեց նրա հանրագիտական երեւոյթը, բայց իր գրական տաղանդը մնաց չզնահատուած: Գրականագիտութիւնը դեռ իր խօսքը կ'ասի նրա մասին (Ս.Սարինեան, «Հայոց գրականութեան երկու դարը» հ. 3, էջ 446):

Մանկութիւնն ու պատանեկութիւնն Արցախում անցկացրած, Շուշիի մանկավարժական ուսումնարանը գերազանց գնահատական-

ներով աւարտած Հ. Խաչատրեանը 1945-ին ընդունուեւ 1950 թուականին աւարտուեւ է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզուի եւ գրականութեան բաժինը: Աշխատանքային գործունէութիւնը սկսում է Կապանում՝ մանկավարժութեամբ: 1959 թ. Կապանից տեղափոխուեւ է Երեւան, անցնում լրագրողական աշխատանքի: 1962 թուականին Հայաստան շրջագայութեան եկած ամերիկացի նշանաւոր նկարիչ, գրող ու հասարակական գործիչ Ռոբուէլ Քենտը, որին որպէս Արմենպրեսի թղթակից ուղեկցում էր Հայկ Խաչատրեանը, հայերէնից անգլերէն է թարգմանել տալիս Հ. Խաչատրեանի յղուածներին մէկը, ծանօթանում դրան: Արձագանքը հետեւեալն է լինում. «Լսիր, բարեկամ, աշխարհի բոլոր կողմերում լրագրողները ջանում են հմտանալ իրենց գործի մէջ, յուսալով, թէ գուցէ յաջողուի մի օր գրող դառնալ եւ թողնել լրագրողի դժուարին գործը, դու հակառակն ես անում, լրագրութիւն ես անում գրողի հաշուին: Աստուած քեզ օժտել է գրողի ձիրքով, իսկ դու եկել ես, քո ոսկին պղնձի հետ ես փոխանակում» (Հ. Խաչատրեան, «Գրական յիշատակարան», Երեւան, 1996, էջ 5): Այս դիտողութիւնը սթափեցնում է գրողին: Դեռ 1959 թ. գրողի մանկութեան մտերիմ ընկեր, գրականագէտ Սեւակ Արզումանեանի խորհրդով ու օգնութեամբ «Սովետական գրականութիւն» ամսագրում տպագրել էր «Լեռները շուռ են գալիս» վիպակը: Ռոբուէլ Քենտի դիտողութիւնից հինգ տարի անց՝ 1967 թուականին, Հ. Խաչատրեանը ընթերցողների սեղանին է դնում «Տիգրան Մեծ» պատմավէպի առաջին գիրքը: Վէպը անաւարտ, իր վրայ է գրաւում ընթերցողների եւ գրականագէտների ուշադրութիւնը: Կարծիքները բազում էին, հիմնականում՝ դրական: «Տիգրան Մեծի» առթիւ ակադեմիկոս-գրականագէտ էդ. Ջրբաշեանը գրում է. «Հայկ Խաչատրեանն ունի իր պատկերած հեռաւոր անցեալի խոր զգացողութիւն եւ դա կարողանում է փոխանցել ընթերցողին: Ամբողջ վէպի ընթերցանութեան ընթացքում զգում ես այն մանրակրկիտ, տքնաշան ու բարեխիղճ աշխատանքը, որ հեղինակը կատարել է պատմագիտական եւ աշխարհագրական աղբիւրների, ժամանակի, կենցաղի ըմբռնումների ու բարբ-

րի ուսումնասիրութեան համար»: («Սովետական գրականութիւն», 1968, թիւ 2, էջ 145): Ստեփանակերտից բանասիրական գիտութիւնների թեկնածու Ժան Անդրեանը, 1967 թ. գրում է նրան. «Կարդացի քո «Տիգրան Մեծ» պատմավէպը եւ հիացայ: Այ տղայ, Հայկ, դու գիտե՞ս, որ առաջին հայ գրողն ես, որ գրական ասպարէզ է մտնում պատմավէպով»: («Գրական յիշատակարան», էջ 29):

Դիմելով պատմավէպի ժանրին՝ գրողը խորապէս գիտակցում էր պատմավիպասանութեան առաւել աշխատատար, պատասխանատու ու դժուարին գործը: «Ոչ մի գրող, յետագայում գրում է Հայկ Խաչատրեանը, չի կարող պատմավէպով գրական ասպարէզ իջնել երիտասարդ տարիքում: Պատմավիպասանը պէտք է ոչ միայն մեծ կենսափորձ ունենայ, այլեւ բաւարար գիտելիքներ ամբարի գրեթէ բոլոր գիտութիւնների բնագաւառներից: Նախ պէտք է մի լրջմիտ պատմաբանի մակարդակով իմանաս քո եւ հարեւան ժողովուրդների պատմութիւնը, բազմազան գրքերից եւ գիտական աշխատութիւններից քաղես հոլովի գիտելիքներ ու այլազան տեղեկութիւններ, որպէսզի իմանաս, թէ քո նկարագրած դարաշրջանում հայերն ու նրանց հարեւանները ինչ էին հագնում, ինչ էին ուտում, ինչ գէնք ու գործիք էին օգտագործում: Երկար տարիների ընթացքում 60-ի չափ առանձին տետրերում գրի եմ առել, թէ հին հայերը, պարսիկները, յոյները, հրեաները, ասորիները, վրացիները եւ հարեւան միւս ժողովուրդները ազգագրական ինչ նկարագիր են ունեցել» («Գրական յիշատակարան», էջ 11):

«Տիգրան Մեծի» առաջին գրքից մէկ տարի անց՝ 1968 թ., գրողը հրատարակում է իր երկրորդ պատմավէպը՝ «Էրեբունին»: Գիրքը, որ ձեւաւորել էր նկարիչ Միհրան Սոսոյեանը, գրքերի անդրկովկասեան առաջին ցուցահանդէս մրցանակաբաշխութիւնում առաջին կարգի մրցանակ է ստանում: Վէպը ծնուել էր ճիշտ ժամանակին՝ էրեբունի-Երեւանի հիմնադրման 2750-ամեակին նուիրուած տօնակատարութիւնների նախաշէմին: Էրեբունին եւս արժանի արձագանքներ է ստանում ընթերցողների կողմից: Հրապարակախօս-լրագրող Լ. Հայրապետեանը այսպէս է արտայայտուեւ. «Պատ-

մագիտական հիմքի վրայ՝ հեղինակն իր երեւակայութեան ուժով կենդանացրել է Մենուայի որդի Արգիշտի Առաջինի հայրենանուէր գործունէութեան այն հատուածը, որն առնչուեւ է էրեբունու՝ Երեւանի հիմնադրմանը: Վէպի անցքերը տեղի են ունենում մ.թ.ա. 782-776 թթ.: Հեղինակը գերի չի մնում դարաշրջանին, արտայայտչական նրա ոճերին, այլ համարձակօրէն մեզ է մօտեցնում պատկերած դարաշրջանը՝ չընկնելով մոդեռնացման վտանգի մէջ»: Ակադեմիկոս Սեւակ Արզումանեանը 1990 թ. լուս ընծայած «Խորհրդահայ վէպը» աշխատութեան չորրորդ հատորի 475-528-րդ էջերում գրականագիտական ընդհանուր վերլուծութեան է ենթարկում Հ. Խաչատրեանի «Էրեբունի» (1968), «Տիգրան Մեծ» (1967, 1972, 1990), «Արտաւազը» (1975), «Արտաշէս» (1980) պատմավէպերը: Նա գրում է. «Հեռաւոր անցեալի քաջիմացութեամբ, հեթանոսական դարերի դիմամիական, ռիթմը զգալու եւ արտացոլելու հմտութեամբ քիչ հեղինակներ (պատմաբան, թէ գրող-արուեստագէտ) կարող են չափուել Հ. Խաչատրեանի հետ: Արձակագիրն ուղղակի ապշեցուցիչ ճանաչութիւն է հանդէս բերում, միջավայրը, ժամանակը, պատմութիւնը ներկայացնում այնպէս, ասես ինքը եղել, ապրել է հեռաւոր այդ դարերում»: (Ս. Արզումանեան «Խորհրդահայ վէպը», Երեւան, 1990, էջ 483-484): Դեռ 1980 թ. Սերգէյ Սարինեանը ընդգծել էր. «Ոչ մի հայ հեղինակ հայոց հեթանոսական դարաշրջանն այնպիսի ընդգրկումով չի պատկերել, որքան Հայկ Խաչատրեանը: Ինքը՝ Հայկ Խաչատրեանը, խոստովանում է. «Քառասուն տարուց աւել է, ինչ ես շփուում, նստում, վեր եմ կենում թագաւորների հետ: Ես պատմավիպասան եմ, եւ իմ գործն ու անելիքը դա է: Օրուայ ընթացքում ես մի քանի անգամ վեր ու վար եմ անում մեր պատմութեան քառուղիներում, համում մինչեւ Հայկ Աղեղնաւորն ու ետ գալիս, կշտամբում մեր գօրեղ նախնիներին, որոնք չպէտք է թոյլ տային, որ մեր հանճարեղ բնօրրանը ոտքի կոխան դառնար այսպէս, եւ մենք կծկուէինք մեր հայրենիքի մի անկիւնում»: («Գրական յիշատակարան», էջ 11): 1985 թուականին գրողի տաղանդն իր հասուն դրսեւորումն է ունենում «Քերթողահայրը» պատմականագրական վե-

Շաբ.ը էջ 19

## Գրական Բնարկում




**Կին գրողը հայ գրականութեան մէջ**

Կազմակերպութեամբ  
Թեքեան Մշակութային Միութեան (Լոս Անճելլոս)

### ԳՐԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

#### ԿԻՆ ԳՐՈՂԸ ԸՆՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Չեկուցողներ՝  
Սոնա Զէյրեան  
ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ եւ ԿԻՆ արձակագիրներ

Մարիա Քրիստեան  
ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ եւ ԿԻՆ քանաստեղծներ

Հանդիսավար՝  
Երուանդ Գոշումեան

Գեղարուեստական քաժին

**ՈՒՐԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 21, 2011**  
Երեկոյեան ժամը 7:30ից

**ՎԵՆԵՏՅՈՒ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՊԱՐԱՆ**  
222 E. Harvard Avenue - Glendale  
Validated parking at Marketplace parking structure  
Harvard & Maryland

ՀՈՒՐԱՄԻՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՏԸՆ ԱՍՍ



"Քաջ Նազար" հանդէսը եւ հեռուստաժամը  
Ներկայացնում է

# 12-րդ ամեակի ԹԵԼԵԹՈՆ

Ի ՆՊԱՍՏ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆՂԻ ԲԻՄՆԱԴՐԱՄԻ,  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԵՒ ՀԱՇՄԱՆՂԱՍ  
ԵՐԵՄԱՆԵՐԻ ԵՒ ՆՐԱՆՑ ՄԱՆԿԱՏՆԵՐԻ  
ԿԵՐԱՆՈՐՈՎՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ  
(հիմնաձ 1999թ.)

**Կիրակի, հոկտեմբեր 9, 2011**  
**երեկոեան ժամ 5-11-ը**

Sponsored by

"**KACH NAZAR**" Magazine & TV Show  
**12 ANNIVERSARY**

**NATIONWIDE TELETHON**

**ON SUNDAY**  
**OCTOBER 9, 2011**

ARMENIAN AMERICAN ORPHANS CHRISTMAS FUND, INC.  
FOR DISABLED CHILDREN AND FOR THE RESTORATION OF CHILDREN'S HOMES

ՕԳՆԵՆՔ ՄԵՐ ԵՐԵՄԱՆԵՐԻՆ ՆՐԱՆՑ  
ԱՊԱԳԱՆ ԿԵՐՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

HELP OUR CHILDREN TO BUILD THEIR FUTURE . . .

[www.forourkids99.com](http://www.forourkids99.com) • e-mail: [forourkids99@gmail.com](mailto:forourkids99@gmail.com)

**AMGA**  
**CHANNEL 380**  
Glendale, CA  
**From 5:00 pm**  
**11:00 pm**

<p><b>BEFORE</b></p>	<p><b>Kharpet 2008</b></p>	<p><b>AFTER</b></p>	<p>Everyday we build the dreams and future of our children with your generous donations. In their prayers they remember you and give their blessings upon you.</p> <p>Ձեր օգնութեամբ մենք ամէն օր կառուցում ենք, հանգստութիւն և ուրախութիւն պարգեւում հայրենի կարօտեալ երեխաներին: Նրանք իրենց աղօթքներում միշտ յիշում և օրհնում են ձեզ...</p>	<p><b>Spitak #1 School 2009</b></p>	
<p><b>Spitak #1 School 2010</b></p>		<p><b>Spitak #1 School 2011</b></p>			

P.o. Box 250038 • Glendale, CA 91225 • Tel: 818-246-0125 • 818-239-6880 or 818-606-2070  
E-mail: [Forourkids99@gmail.com](mailto:Forourkids99@gmail.com) Non-profit Organization A Tax-exempt 501 (c)3 Charity

### ՍԱՆԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

Երեխային հոգեկան եւ մտա- յին աշխարհը կ'աճի մարմնի ֆի- զիքական զարգացման հետ զուգա- հեռ ծնունդէն մինչեւ արեւունքի շրջան:

Յատկաշատական եւ մանկական հոգեբանութեան զարգացման հե- տեւեալ շրջանները:

**Ա.-ԲԵՐԱՆԱՅԻՆ ՇՐՋԱՆ** ԾՆՈՒՆԴԻՆ ՄԻՆՉԵՒ 15 ԱՄԻՍ-Այս շրջանը կը գուգադիպի նորածինի արագ աճման հետ, երբ անօգնական փոքրիկը աստիճանաբար կը սկսի նստիլ, ապա քալել: Այդ շրջանը կը բաժնուի երեք փուլերու:

ա- Ծնունդի առաջին օրէն մինչեւ 3 ամիս Երեխան զգայուն կ'ըլլայ արտաքին աշխարհի գրգիռ- ներուն նկատմամբ ձայն, դաշիլ, պատկեր, ան չի գանազաներ, բայց կը զգայ անոնց հաճելի ըլլալը:

Տարօրինակ է, որ տղաքը աւե- լի զգայուն եւ տեսողական, իսկ աղջիկները լսողական գրգիռներու հանդէպ: Սկիզբը երեխան կը սկսի փայտիլ, ապա գոհունակութեան ձայ- ներ հանէ, անոր շարժումները կ'ըլլան անկառավարելի, կը շարժէ ամբողջ մարմինը, ձեռքերն ու ոտքերը: Այդ ժամանակ է, որ մօր գուրգուրանքը կը դառնայ անհրա- ժեշտութիւն եւ անոր պատկերը ապահովութիւն կը պարզեւէ փոք- րիկին:

Այս շրջանը կը կոչուի բերա- նային, քանի որ երեխայի ամբողջ հետաքրքրութիւնը կը կեդրոնա- նայ բերանի շուրջ, կուրծք կ'ուտէ ծծակ, շիշ կը ծծէ, ամէն բան բերանը կը տանի:

բ-Մօր եւ մանկական շփման շրջան կերակրելու, մաքրութեան ընթացքին մօր գուրգուրանքը եւ հոգատարութիւնը, անհրաժեշտ է երեխային ներդաշնակ զարգաց- ման համար: 3-4 ամսական երեխա- յի մօտ զգացական օրկանները ար- դէն լիովին կը գործեն, որուն շնորհիւ շարժումները կը դառնան նպատակադրուած: Մինչեւ վեց ամ- սական երեխայի մօտ սեռային ոչ մէկ զգացում կը յառաջանայ:

գ- 9-15 ամսական երեխան կը սկսի շօշափել, ձեռներ, առաջին անգամ կը բախի իրականութեան կայ, կը ցաւցնէ, ծնողքի յանդիմու- թիւնը կը լսէ: Անոր ամէն նոր գործողութիւնը, կը խթանէ հոգե- կան զարգացում օրինակ նստելով, ան հնարաւորութիւն կ'ունենայ աւե- լի տեսնել, աւելի շփուիլ շրջապա- տին հետ:

**Բ-ՍՐԲԱՆԱՅԻՆ YANUS'** ՇՐՋԱՆ, 15 ԱՄՍԱԿԱՆԻ ՄԻՆՉԵՒ 3 ՏԱՐԵԿԱՆ-Այս շրջանին երեխայի հանդէպ յանդիմանութիւնները կը շատնան եւ ան կը սկսի խաղալ սեռային օրկաններու հետ: Այս շրջանին է, որ երեխան կը սկսի տիրապետել սրբանի մկանային հան- գոցին, կը դադրի «Տակը ընելէ», որ արդիւնքն է դաստիարակու- թեամբ ձեռք բերուած սովորու- թեան:

Երեք տարեկան երեխաներու մօտ, արդէն նկատելի է միգրու- ժամանակ կեցուածքի տարբերու- թիւնը, սակայն երեխաները չեն կրնար հասկնալ կատարուածը, կը սկսին տարբեր բնոյթի հարցեր տալ: Պէտք է երեխաներուն մէկ-եր- կու տարեկանին անպայման վար- ժեցնել գիշերանօթի, տղաքը յա- ճախ կանգնած միգրէ չեն ուզեր, իսկ աղջիկները ընդհակառակը, կը փորձեն միգրէ կանգնած:

Երկու տարեկան երեխան բնագ- դով «սեփականատէր» է եւ դիւ-

րութեամբ իր խաղալիքը չի տար ուրիշի: Ան աստիճանաբար աւելի բարեացակամ կը դառնայ եւ կը սկսի սիրել շուրջինները:

Երկու տարեկան երեխաներու մօտ տարբերութիւն դեռ չկայ զգացումներու մէջ, տղան կրնայ խաղալ պուպիկներով, սակայն ար- դէն չորս տարեկանին, երբ ան կը խաղայ աղջիկներու հետ «տուն տուն», կը նախընտրէ ըլլալ հայր կամ եղբայր: Երբ այդ տարիքին տղայ երեխան կը խուսափի տղոցմէ եւ կը նախընտրէ խաղալ աղջիկնե- րու հետ, ստանձելով մամայի կամ քոյրիկի դեր, պէտք է դիմել ման- կական հոգեբանի օգնութեան:

Արդէն երեք տարեկանին բա- ւականութիւնը կը զգայ խաղալով ուրիշներու հետ, քայլ առ քայլ երեխայի յարձակողականութիւնը կը փոխարինուի բարեացակամու- թեամբ, իսկ եթէ յարձակողական բնաւորութիւնը շարունակուի, պէտք է խորհրդակցիլ մանկական հոգե- բանի հետ:

Երեք տարեկան երեխան լոգ- նալու ժամանակ կը սկսի ճանչնալ իր մարմինը: Լարուած առնանդա- մը «penis» տեսնելով երեխան կրնայ հարցնել, թէ ինչ է ան: Պէտք է սաստել ըսելով թէ ամօթ է այդպիսի բաներ հարցնելը, հան- դարտութեամբ պէտք է պատաս- խանել, որ այդպէս է նաեւ մեծ տղոց եւ հայրիկի մօտ, իսկ մամայի եւ քոյրիկի մօտ ուրիշ է:

Փոքր երեխաներու մօտ առ- նանդամի լարումը «erection» նկա- տելի է լցուած միզապարկի եւ ուղիղ աղիքի պարագային: Երե- խան կը ձեռնէ իր սեռային օրկան- ները երբ կը զգայ անհանգստու- թիւն: Պարտաւոր է առանձնակի ու- շադրութիւն դարձնել երեխայի առողջապահական ճիշդ խնամքին, կանխելու համար վատ սովորու- թիւններու յառաջացումը:

Պէտք է երեխայի սեռային օրկանները լուալ կամ շորիկը փո- խել օտարներու ներկայութեան: Ան կը վարժուի եւ անոր մօտ կրնայ յառաջանալ զգացում, որ ամօթ է ցուցադրել սեռային օրկանները ուրիշներուն կամ մերկանալ օտար- ներու առջեւ:

Այս տարիքին երեխաներու մեծ մասը չափազանց կապուած կ'ըլլայ իրենց մայրերուն, չեն ու- գեր հեռանալ անկէ, մինչեւ աստի- ճանաբար կազմուի անոնց անհա- տակութիւնը: Մօր հետ կապուա- ծութիւնը երբեմն այն աստիճան կ'ըլլայ, որ նեղացուցիչ կը դառ- նայ, սակայն անհրաժեշտ է մայրա- կան համբերութիւն ցուցաբերել եւ երբէք երեխային բռնի չհեռաց- նել: Այս շրջանին մօր դերը շատ մեծ է մանուկի կեանքի մէջ եւ մօրմէ երկար ժամանակով յան- կարծակի բաժանումը շատ ծանր կ'ազդէ երեխայի վրայ:

Այս տարիքին է, որ ծնողքը ուշադրութիւն պէտք է դարձնեն եւ բացառեն երեխայի մօտ autism-ի նշանները - խօսելու, նախադասու- թիւն կազմելու դժուարութիւն, սահմանափակ եւ յաճախակիօրէն կրկնուող նոյնանման շարժումներ:

Գ- 3-6 ՏԱՐԵԿԱՆ- Այս տարի- քին, երեխայի մօտ կը սկսի յառա- ջանալ հետաքրքրութիւն իր մարմ- նի նկատմամբ: Սակայն 4-5 տարե- կան երեխան դեռ կը ձեռնէ սեռա- յին օրկանները ինչպէս մարմնի այլ մասերը, եթէ անոնք մասնաւոր անհանգստութիւն չեն յառաջաց- ներ: Եթէ ծնողքը նկատելի եւ

կոպիտ ձեւով արգիլէ, այն ժամա- նակ երեխայի մօտ կը յառաջացնէ մասնաւոր հետաքրքրութիւն: Այս տարիքին պէտք է երեխաներու հետ լոգնալ կամ քնանալ միւլեւնոյն անկողինին մէջ, խուսափելու հա- մար աւելորդ հետաքրքրութիւն յառաջացնող հարցումներէ:

Այս շրջանին երեխան կը սկսի գիտակցիլ, որ մայրը հոգ կը տանի ոչ միայն իրեն, այլեւ իր քոյրե- րուն, եղբայրներուն եւ յատկապէս հօրը: Եթէ քոյր կամ եղբօր նկատ- մամբ յառաջացած «թշնամանքը» ան «ստիպուած է չաղթահարել», յանուն մօր սիրոյ, վախնալով, որ մայրը կը նեղուի, ապա այլ է պարագան հօր նկատմամբ: Երեխան կը սկսի պայքարիլ ինքն իր հետ եւ այդ ժամանակ է որ կը ծնի հոգե- բանութեան մէջ նկարագրուած յայտնի մանկական ապրումներու էօտիփեան եւ էլէկտրա-ի բար- դոյթները՝ որ կ'արտայայտուի ծնողներէն մէկուն նմանելու ձգտու- մով, իսկ միւսի նկատմամբ անբար- եացակամութեան դրսեւորումով:

Շատ կարեւոր է, թէ նման բարոյութիւնները ինչ գարացում կրնան ունենալ եւ կնիք կը դնեն երեխայի հոգեկան աշխարհի վրայ: Այդ շրջանին շատ կարեւոր է ընտանիքի մէջ ծնողներու վերա- բերմունքը իրարու եւ երեխաներու հետ:

Կը կարծուի որ հասունու- թեան հետ մանկական շրջանը կը մոռցուի, սակայն այս տարիքին է, որ կը ձեւաւորուի մարդու բնաւոր- ութեան շարք մը գիծեր եւ ենթա- գիտակցութեան մէջ կը պահպան- ուի հակառակ սեռի նկատմամբ ունեցած զգացումները: Հետագա- յին կեանքի ընկեր կամ ընկերուհի ընտրելու ժամանակ այդ զգացում- ներու մասին յիշողութիւնները կը ստիպեն յաճախ նախապատուու- թիւն տալ մէկուն, որ կը յիշեցնէ անոր՝ «մանկական սէրը» ծնողնե- րու հանդէպ:

Ըստ հոգեբան Ֆրէյդի այս բարդոյթներու հետեւանքներն են, որ յետագային կրնան պատճառ

դառնալ շարք մը հոգեկան հիւան- դութիւններու եւ սեռային անկա- րողութեան:

Չորս տարեկանին, երեխան արդէն կը խաղայ իր պորտի հետ, կը հարցնէ անոր մասին, յաճախ կը ցուցադրէ սեռային օրկանները կամ կը կրկնէ լսած անկիրթ խօսքերը:

Այս շրջանին է, որ կը սկսի հարցումներու շարանը ուրկէ ինք եկած է, ինչպէս մտած է մօր փորը կամ ինչպէս դուրս ելած է անկէ:

Հետաքրքրութիւնը մօր կուրծ- քի հանդէպ, կապուած է կուրծքով անանելու հաճելի զգացումի հետ:

Այս տարիքի երեխան սպա- սուհի կամ օգնականի խնամքին ձգելը, կրնայ ճակատագրական ըլ- լալ երեխայի հոգեկան զարգացման համար, իսկ մանկապարտէզը կամ դպրոցը ոչ թէ կը փոխարինեն, այլ միայն կը լրացնեն ընտանեկան դաստիարակութիւնը:

6-10 ՏԱՐԵԿԱՆ- Այս տարիքը կը նկատուի երեխայի ֆիզիքական կազմաւորման եւ մտաւոր զար- գացման շրջանին: Վեց տարեկան երեխային, արդէն պէտք է բացատ- րել, որ մեծերը միշտ չէ որ բարի են, որ պէտք է երթալ անձանօթ- ներու հետ, խափուիլ անոնց առա- ջարկած նուէրներէ, պատուիրել, որ եթէ անձանօթը պարտադրէ կամ ուժ գործադրէ ապա երեխան պէտք է գոռայ, օգնութիւն կանչէ: Այս միջոցով կանխած կ'ըլլանք բռնաբարութեան բացատրելի դէպ- քերը, ինչպէս նաեւ տարբեր նպա- տակներով փոքրերու առեւանգու- մը, որոնք յաճախ կը հանդիպին վեցէն-տասնմէկ տարեկաններու մօտ:

Վեց տարեկան երեխան աւելի հետաքրքրասէր է ան յաճախ հար- ցեր կու տայ, կը կրկնէ դուրսի լսածը եւ կը սպասէ ծնողներու վերաբերմունքին:

Երեխաները, այս տարիքին, զարմանալիօրէն եւ դիւրութեամբ կը ցուցադրեն իրենց սէրը ծնողնե- րուն եւ հարազատներուն հանդէպ,

Շաբ.բ Էջ 19



ՄԵՆԵՐՆԵՐՈՒ ՀԱՅՐԵՆԱԿԱՅԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ  
**SIS COMPATRIOTIC & CULTURAL SOCIETY, INC.**

Ուրախությամբ կը ներկայացնէ

# ՆԱԽԱՃԱՇ

## Սիսեցիներու հետ

**Կիրակի 9 Հոկտեմբեր, 2011**  
**կ.ա. ժամը 10:30-ին**

Գալայճեան ընտանիքի բնակարանէն ներս  
 5079 Zelzah Ave, Encino, CA 91316

**\* Սիջերկրականեան-Հայկական Նախաճաշ**  
**\* Նարտիի Մրցաշարը**  
**\* Պլօթի Մրցաշարը**

Մուտքի Լուր՝ \*10

**Հանելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել.**

Էլջո Հատուտատեանին	<b>562-697-1927</b>	Սկրտի Աջապահեանին	<b>818-705-5966</b>
Արփի Կիսցիներուին	<b>626-796-9414</b>	Արփի Գիտութեանին	<b>818-430-6708</b>
Արփի Ռաֆայելեանին	<b>818-429-9272</b>	Անգիլե Զարկոբեան	<b>818-325-9298</b>
Հարրի Լուրիանին	<b>310-600-6962</b>	Արփ Զարկոբեանին	<b>818-468-8117</b>

### ԻՆՉՊԵՍ ԿՐ ՆԱՅԻՍ ԺԱՄԱՆԱԿԻՆ

Ամերիկայի Միացեալ Նահանգներու Պրիսթըն համալսարանին մէջ գործող երեք հոգեբաններէ կազմուած խմբակ մը կը խորհի, թէ կրցած է ստեղծել միջոց մը, որ մեզմէ իւրաքանչիւրին կ'օգնէ աւելի լաւ ձեւով հասկնալու իր եւ այլ մարդոց անհատականութիւնները: Այս հոգեբաններուն յայտնաբերած հասկացողութիւնը կը կայանայ ժամանակին հանդէպ իւրաքանչիւր անհատի ունեցած նայուածքին վրայ: Մեզմէ իւրաքանչիւրը մանկութենէն ունակ է բոլոր դէպքերը դիտելու ժամանակի չորս ակնոցներէն մէկուն ընդմէջէն:

Մենք դէպքերուն կը նայինք կամ անցեալէն (անցեալի ձեւը), կամ ինչպէս այս դէպքերը կը սահին երէկուան, այսօրուան եւ վաղուան շղթային մէջ (ժամանակի ընթացքի ձեւը), կամ այս դէպքերը ի՞նչ իմաստ ունին այսօր (ներկայի ձեւը) եւ կամ այս դէպքերը ինչպէ՞ս պիտի գարգանան ապագային (ապագայի ձեւը): Հոգեբանները կը շեշտեն, թէ մեզմէ իւրաքանչիւրը պէտք է յայտնաբերէ ժամանակի ո՞ր ձեւին կը պատկանի: Արդարեւ, ստորեւ կը ներկայացնենք ժամանակի չորս ձեւերը, որպէսզի դուն յայտնաբերես, թէ ինչպէ՞ս կը նայիս ժամանակին եւ ո՞ր տեսակին կը պատկանիս:

1) Անցեալի Ձեւը.  
Քեզի համար, անցեալը միշտ անսպասելիօրէն կը յայտնուի ներկային մէջ եւ ապա ամէն ինչ կը վերադառնայ անցեալին: Շատ քաղաքավար ես եւ շրջապատը քեզի կը գնահատեն յատկութիւններուդ եւ արժանիքներուդ համար: Մեծ հաճոյք կը գտնես յիշատակելի ապրանքներ հաւաքելով եւ ընդհանրապէս կը յաջողիս յուշերդ գրի առնելու մէջ: Դասաւորուած հարցերը կը սիրես եւ այս պատճառով ընդհանրապէս աւելի հանդարտ եւ հաւասարակշռուած ես գէմ վիճակներու պարագային:

2) Ժամանակի Ընթացքի Ձեւը.  
Միշտ կը գիտակցիս ժամանակին շուտ անցը եւ կեանքը կը համարես գորգ մը, որ մեր առջեւ աստիճանաբար կը բացուի, մինչ մենք անոր վրայէն կը քայլենք: Ըստ քեզի, անցեալը անկախ է ներկայէն ու ապագայէն: Քեզի համար, պէտք է ներկայ դէպքերը լայն շրջանակի մէջ երեւին, եւ ընդգրկեն երէկը, այսօրը եւ վաղը: Կարգ մը մարդիկ քեզի կը համարեն պող, վերապահ եւ ուրիշներուն նկատմամբ անհոգ, մինչ խորքին մէջ այդպէս չես: Կը սիրես հարցերը տեսնել ընդհանուր ձեւով: Հակում ունիս հարցումներ հարցնելու, սակայն աշխատասէր ես, ուշադիր եւ շուրջիներդ մխիթարող:

3) Ներկայի Ձեւը.  
Այս ամէնէն դիւրին տեսակն է ժամանակի չորս տեսակներուն մէջ: Կը հասկնաս ներկան եւ շատ հոգ կը տանիս անոր: Քեզի համար կեանքը կը ներկայացնէ ներկային պատահածները: Ոչ թէ միայն անցեալով չես հետաքրքրուիր, այլ նաեւ իսկական հետաքրքրութիւն չես ցուցաբերեր ապագային նկատմամբ: Անմիջական հակադարձութիւններ ունիս, արագ որոշումներ կ'առնես, կ'ատես ուշացումն ու սպասումը:

4) Ապագայի Ձեւը.  
Ոչ միայն մեծ յոյսեր կը կապես ապագային, այլ նաեւ կը փորձես ենթադրել ինչ կ'ընայ պատահիլ գալիքին: Կը սիրես ծրագրերդ գծել եւ մեծ երազներու մասին երազել, սակայն անհամբեր ես մանրամասնութիւններու նկատմամբ: Ասպարէզային գեանի վրայ, կարելիք կը տրամադրես, երբ հետեւելիք ծրագիրդ նախապէս կը գծես եւ ընդհանրապէս առանց այդ ծրագրին քիչ մը կորսուած վիճակի մէջ կ'ըլլաս:

\*\*\*

Վերոնշեալ ձեւերը ժամանակին նայելու չորս տեսակներն են: Սակայն երեք հոգեբանները (Մէն,

Օգմոնտ եւ Սիկլըր) կը զգան, թէ մենք պէտք է ոչ միայն գիտակցինք ու հասկնանք մեր պատկանած խմբակին վիճակներ, այլ նաեւ պէտք է փորձենք հակնալ ուրիշները, որպէսզի կարենանք անոնց հետ համաձայնիլ: Հետեւաբար, հոգեբանները փափաքած են լուսարձակի տակ առնել ժամանակի իւրաքանչիւր ձեւին իմաստը եւ այս եղած է անոր արդիւնքը.

\* Անցեալի ձեւին պատկանողները.- Այս անձերը զգացական են: Անոնք վարպետութիւններ ունին իւրաքանչիւր դէպքի զգացական իսկական գորութիւնը արժեւորելու, հետեւաբար, մասնագէտ կը դառնան ուրիշներուն զգացումներուն վրայ ազդեցութիւն ունենալու: Այս տեսակին պատկանող անձերուն ամէնէն գէշ տկար կէտերն են, որ անոնք չափազանց վերապահ կ'ըլլան եւ ժամադրութիւնները չեն յարգեր, որովհետեւ իրենց ընդհանրական զգացումները կը գերազանցեն իրենց առաքելութիւնը:

\* Ժամանակի ընթացքին ձեւին պատկանողները.- Այս անձերուն համար անձնական զգացումները իրենց առաջնակարգ գործերու ցանկին առաջին դիրքը չեն զբաղեցրել: Ըստ իրենց, իւրաքանչիւր դէպք պէտք է յայտնուի ներկայ ժամանակի ընդհանուր շրջանակին մէջ, նոյնիսկ եթէ անոնք ստիպուին բռնի զայն քաշելու՝ որպէսզի ան յարմարի ժամանակին: Այս տեսակին պատկանողները կը վայելեն լուրջ եւ գիտական ձեւով մտածողութիւն եւ վերլուծում, այսինքն նախապէս կը քննեն վիճակը ընդհանուր առմամբ եւ կը փորձեն այդ վիճակին նայելու օրինակելի ակնոցով: Անոնք նոյնպէս տրամաբանական ձեւով կը նախատեսեն բոլոր անհրաժեշտ ու հաւանական վերջերը: Սակայն աճա

անձերը ծայրագոյն երջանկութեան մէջ կ'ըլլան, երբ կարենան իրենց տեսակէտը արտայայտել մէկ կողմէն ժամանակով դէպի ետ երթալով եւ միւս կողմէն ապագան գերազանցելով:

\* Ներկայի ձեւին պատկանողները.- Այս անձերը ամբողջովին կազմ ու պատրաստ կ'ըլլան բոլոր տեսակի անակնկալ պարագաները լուծելու: Անոնք թոյլ չեն տար, որ որեւէ նախապէս կատարուած յանձնառութիւն կամ կարգադրութիւն իրենց ճամբան խափանէ: Անոնք վարպետ են առաջնորդի ասպարէզներուն մէջ: Այս տեսակին պատկանող անձերը կը փորձեն ուրիշները կառավարել՝ իրենց նպատակին հասնելու համար: Հաւանական է, որ այսպիսի վերաբերում մեծ լարուածութիւն յառաջացնէ այս անձերուն ուրիշներուն հետ ունեցած յարաբերութեանց մէջ:

\* Ապագայի ձեւին պատկանողները.- Այս խմբակին պատկանող անձին համար անցեալը կը ներկայացնէ տեղի շուք մը, իսկ ներկան՝ մշուշ մը: Եւ այս անձերը ջերմութիւն, արեւու լոյս, լուսաւոր լոյսեր եւ գրգռում պիտի չգտնեն բացի լերան միւս կողմէ գտնուող ճամբուն յաջորդ դարձուածքին ետին: Այս անձերուն կեանքը կը թուի ըլլալ յաջորդ դարձուածք մը փնտռելու վազը: Անոնք ընդհանրապէս ուրիշներուն համար ներշնչումի մեծ աղբիւր մը կը կազմեն եւ անոնք օրինակելի անձեր են առաջնորդի դիրքը ստանձնելու: Ոչ մէկ բան կրնայ ձանձրոյթ յառաջացնել այս անձերուն մօտ բացի անմիջական եւ գործնական մանրամասնութիւններէն, եւ հետեւաբար, անոնց կատարած գորողունքութիւնները պէտք է առնչուած ըլլան հեռաւոր ապագային հետ:



**BURBANK-GLENDALE-PASADENA AIRPORT AUTHORITY ENGINEERING GROUP**

**NOTICE TO DESIGN-BUILDERS & ALL INTERESTED**

The Bob Hope Airport invites all interested including those from the Tri-Cities (Burbank-Glendale-Pasadena) to attend an informational meeting on the upcoming design-build procurement of a new Parking Structure and the prequalification process for this procurement. This meeting is not mandatory.

The Authority is committed to opportunities for Disadvantaged Business Enterprises (DBE), Small Business Enterprises (SBE), Disabled Veteran Business Enterprises (DVBE), and In-Service Disabled Veteran Business Enterprises (IS-DVBE).

**Original Project E10-35; Revised to Project E10-35-(III)**  
**Replacement Parking Structure (RPS)**  
 (approx. 1,000 parking spaces)  
 (Federally funded; hence federal guidelines apply)

**Project Type & Description:**  
 New Construction

**Meeting Date & Time:**  
 1:00 P.M. – 2:00 P.M., OCTOBER 10, 2011

**Location:**  
 Bob Hope Airport, Main Terminal, Skyroom  
 2627 Hollywood Way  
 Burbank, CA 91505

(parking is available in the parking structure next to the main terminal, on the roof level only)

**Visit Website:**  
[www.bobhopeairport.com](http://www.bobhopeairport.com)  
 Hyperlink:  
 Business Opportunities



**BURBANK-GLENDALE-PASADENA AIRPORT AUTHORITY ENGINEERING GROUP**

**NOTICE TO CONTRACTORS, VENDORS AND SUPPLIERS**

The Bob Hope Airport invites all interested contractors, vendors and suppliers including those from the Tri-Cities (Burbank-Glendale-Pasadena) to attend a non-mandatory informational meeting on the upcoming procurements of a Regional Intermodal Transportation Center (RITC) and an Elevated Walkway (EW).

The RITC Project (E10-35) was competitively bid on May 25, 2011 to twelve prequalified and eligible general contractors. All bids exceeded available funding and were rejected. The project is undergoing a redesign to fit within budgetary constraints and is targeted for re-bid in Nov/Dec 2011. As of now the following twelve prequalified general contractors remain eligible to compete in the rebid:

**PREQUALIFIED & ELIGIBLE GENERAL CONTRACTORS**

Austin Commercial	S. J. Amoroso Construction
Bayley Construction	Suffolk Construction
Bernards Brothers	Taisei Construction Corporation
KCS West, Inc.	W.E. O'Neil Construction
McCarthy Building Companies	Walsh Group
PCL Construction	Webcor Builders

All interested contractors, vendors & suppliers are invited to attend this informational meeting regarding these procurements. Again, this meeting is not mandatory.

The Authority is committed to opportunities for Disadvantaged Business Enterprises (DBE), Small Business Enterprises (SBE), Disabled Veteran Business Enterprises (DVBE), and In-Service Disabled Veteran Business Enterprises (IS-DVBE).

**Original Project E10-35; Revised to RITC Project E10-35-(I) and EW Project E10-35-(III):**  
**Regional Intermodal Transportation Center (RITC)**  
 (Federally funded; hence federal guidelines apply)

**Project Type & Description:**  
 New Construction – Intermodal Transportation Center, & Elevated Walkway, Off-Site Work

**Meeting Date & Time:**  
 10:00 A.M. - 12:00 P.M., OCTOBER 10, 2011

**Location:**  
 Bob Hope Airport, Main Terminal, Skyroom  
 2627 Hollywood Way  
 Burbank, CA 91505

(parking is available in the parking structure next to the main terminal, on the roof level only)

**Visit Website:**  
[www.bobhopeairport.com](http://www.bobhopeairport.com)  
 Hyperlink:  
 Business Opportunities

### ԱՉՔԻ ԳԵՐԱՆԻ ԵՒ ՇԻՒՂԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

#### Շարունակում է կապերի մասին

Կապերի մասին: Յետագային, նույն յայտագրով, ան այցելեց եզրագծով: Ան կուգար իր անվերապահ եւ սկզբունքային գորակցութիւնը յայտնելու արաբական աշխարհին, նաեւ՝ պաղեստինեան պահանջատեր ժողովուրդին, անոնց հակա-իսրայէլեան պայքարին մէջ: Էրտոզան կուգար դատապարտելու իսրայէլի օդային, ծովային եւ ցամաքային զորքերը պաղեստինեան ժողովուրդի դէմ: Կուգար դատապարտելու Իսրայէլի՝ վիճելի տարածաշրջաններէ ներս-հակառակ միջազգային հանրային կարծիքի ընդդիմութեան նախաձեռնած բնակչութեան տուներու կառուցումը: Խստօրէն կը դատապարտէր Կազայի շրջափակումը:

Այս բոլորը՝ ինչպէս պիտի գնահատէր գերմանական «Ռեյնիշլիս Փոստ»-ը, «կը միտին Թուրքիան դարձնել տարածաշրջանային գերտերութիւն», երեւոյթ՝ որու մասին լրջօրէն կ'արձագանգէր քրեական մամուլը:

Անկախ այդ բոլորէն, առանձնապէս մեր ուշադրութիւնը գրաւող երեւոյթ էր Էրտոզանի՝ եզրագծով վարչապետ Ասամ Շարաֆի եւ ապա Գահիթէի համալսարանի մէջ ուսանողներու հետ ունեցած հանդիպումը ետեւում իր մամուլային ասուլիսը, որ մեր այսօրուան մտորումներուն առանցքը կը կազմէ:

Ասուլիսին՝ ան անդրադառնալով Սուրիոյ նախագահի իշխանութեան գլուխը մնալու պնդանալիս աստուծոյ վրայ՝ կ'ըսէր. «Ժողովուրդին սպաննող ամէն առաջնորդ կը գրկուի օրինակներէն: Եւ ման առաջնորդներ յաւերժ կը դատապարտուին մարդոց խղճմանը»:

Սուրիոյ առաջնորդը, շարունակելով իր բռնած սխալ ուղիին, չի կրնար խաղաղութիւն եւ կայունութիւն բերել երկրին»:

Որքան համոզիչ պիտի ըլլար, որ Էրտոզան, Նախագահ Ասատի ուղղում իր բարոյական հաստատումը կատարելէ առաջ, անիւն մարդակային խղճմանով տէր ըլլալով, քննարկէր իր խղճմանը, քննարկէր իր երկրի անցեալի՝ Օսմանեան եւ ներկայի՝ հանրապետական թուրքիոյ քաղաքական վարչապետի: Ուրիշներուն տրուելիք ամէն բեյադրանք ու ուղղութիւն պէտք էր սեռեր անձնական կեանքի օրինակէն: Անկախ այն իրողութենէն, որ չի գտնուիր ինքզինք յարգող որեւէ խղճմանով եւ սկզբունքով տէր մարդ, որ անձնապէս վերապահութիւններ չունենայ իր ժողովուրդը նկատ, քերոյ ու սպանող իշխանութիւններու հանդէպ եւ չի դատապարտէ գնոնք: Չ'ընդունի, որ նման վարիչներ յաւերժ կը դատապարտուին մարդոց խղճմանով մէջ: Բայց, երբ յաւերժ ցեղասպանական արքայ գամուած օսմանեան իշխանութեան ժառանգորդ մըն է մեղադրողը, ինչպիսիք է վարչապետ Էրտոզան՝ այդ ինքնին պարզապէս կեղծիք է, քաղաքական անբարոյութիւն, դատադրական նոր դարպասում: Պրն Էրտոզանի բարոյաձեւերը կրնային անկեղծ, հասկնալի, ընդունելի դառնալ եթէ իր ներկայացուցած մերօրեայ պետութիւնը ... որպէս ժողովրդասէր, խաղաղասէր, շրջանային կայունութեան հաստատման ցանկացող հանրապետական Թուրքիա՝ նախապէս

չուրանար գինճնախորդող օսմանեան կայսրութեան գործած ոնիրը: Ճանչցա՞ծ ու դատապարտա՞ծ ըլլար Հայ ժողովուրդի դէմ կատարուած նախնիրներն ու Ցեղասպանութիւնը: Հատուցա՞ծ ըլլար հայ ժողովուրդի անդամներին մարդկային, մշակութային եւ նարտապետական կորուստները: Վերադարձուցա՞ծ ըլլար հայոց բռնագրաւուած պատմական հողերը: Սրբուա՞ծ, մաքրուած ըլլար «յաւերժ դատապարտու մը իր ուրիշ մարդոց խղճմանով» մէջ: Իսրայէլ անմասն չի մնաց ... արդարաւէր, ... մարդասէր, ... օրինակաւ եւ ... խաղաղասէր Թուրքիոյ վարչապետ Էրտոզանի հարուածներէն:

Էրտոզան, սիրաշահելու համար մահմետական արաբ ժողովուրդները եւ ըստ էութեան արժանանալու համար անոնց վստահութեան, հաշտ՝ իր ազգային կեղծաւոր, ստապատիք դիւանագիտական բնութագրին՝ ըրչարաշահէ Իսրայէլի հետ ունեցած ծովային անցում միջադէպ մը, որուն պատճառով արդէն իսկ խզած է իր դիւանագիտական յարաբերութիւնները: Ի՞նչ էր պատահածը:

Միջերկրական միջազգային ջուրերուն մէջ, Իսրայէլ սպաննած էր ինքն թուրք մաւստիներ: Իսրայէլ ոչ միայն Թուրքիոյ ներդատութիւնը հայցած չէր, նաեւ, գոհերու ընտանիքներուն վնասից հատուցում չէր կատարած, հակառակ Թուրքիոյ պահանջին: Իր տուած մամուլային ասուլիսին՝ Էրտոզան խստօրէն դատապարտած էր իսրայէլի սանձարձակ գործունէութիւնը արաբ տերութիւններու դէմ: Ան պաշտպանած էր պաղեստինեան ժողովուրդի ազգային շահերը եւ պահանջած նաեւ կազայի շրջափակման վերացումը: Թուրքիա որպէս թէ, Իսրայէլի դէմ ձեռք առած է պատժամիջոցներ: Ան, դիտել տալէ ետեւ թէ «Իսրայէլ նոյնիսկ իրաւունք չունի խաղաղութիւն բարձր բերանն առնելու, քանի որ թուրքիայէն ներդրութիւն խնդրած չէ, կատարած չէ փոխհատուցում գոհուածներու համար, եւ չէ վերցուցած Կազայի շրջափակումը», ան յայտնեց, թէ Թուրքիա կը ծրագրէր մնայուն ներկայութիւն դառնալ միջերկրականէն ներս՝ քրեական երեք եզրապահ մարտանաւերով, պաշտպան կանգնելու համար շրջանային արաբ երկիրներուն:

Ո՞վ է որ կարեւորութիւն պիտի ընծայէ յանցաւորէն ներդրութիւն հայցելու: Խաղաղասիրական, օրինապահական, ժողովրդասիրական եւ խնդմանակային մօտեցում տեսնելու Թուրքիոյ բարոյախօսական բարբառներէն մէջ՝ երբ առաջինը ի՞նք կ'ուրանայ աշխարհով մէկ պայացուցում, հաստատուած, նախնուած եւ դատապարտուած՝ հայոց դէմ իր գործած Ցեղասպանութիւնը: Թուրքիա գիտէ իր ինքն թուրք գոհներուն համար յանցապարտէն ներդրութեան խնդրանք սպասել, դիւանագիտական կապեր խզել, աչ ու ահեակ սպառնալիքներ կարդալ, Միջերկրականէն ներս եզրապահ գրահաւորներ իջեցնելու ծրագրերը մշակել, բայց ինք չի խղճման ուրիշ իր թողած մէկ ու կէս միլիոն գոհներուն համար, անլիք՝ կ'ուրանայ Ցեղասպանութիւնը: Որքան լաւ պիտի ըլլար, որ Թուրքիա նախ տեսներ իր աչքի գերանը, դիմացի-նի աչքի շիւղը տեսնելէ առաջ:

### ԱՆՈՒԱՆԻ ՕՓԵՐԱՅԻ ԵՐԳԻՉ ԱԼԻՆԳՈՒԹԱՆ

#### Շարունակում է կապերի մասին

Կենսաներ, կամաւոր ժրջան աշխատողներ որոնք համոզուած հայ մշակույթին հրամայականին իրենց ամբողջ ոյժն ու աջակցութիւնը կը տրամադրեն պանծացնելու հայուն տաղանդը: Շնորհակալութիւն բուրբին: Ալինին յատուկ շնորհաւորութիւններ եւ լուսառատ բազմաթիւ տարիներ: Աշխարհի հինգ ցամաքամասերու հեղինակաւոր բեմերէն դուրս ան Մոնթէրալի Պոլսահայ Մշ. Միութեան Արամ Խաչատուրեան սրահը երբէք չի մոռ-

նար որուն համար երախտապարտ ենք:

Մենաշնորհը ունեցա՞յ Գութանին ձայնը կրկին ըմբոշնելու, պատիւ կը զգամ այս տեղեկագրութիւնը եւս արձանագրելու համերգին օրն իսկ 18 Սեպտեմբեր 2011ին եւ արտասուլիսը աչքերով ու միտածամանակ լայն ժպիտով, հայ արուեստագիտուհիին տաղանդին հանդէպ անսահման քով եւ նոյնքան ալ բարձրաճակատ հպարտութեամբ, մեծագոյն գմայլանքով ու Ալինին կուռնկէն ու Լորիկէն արբեցած կը ստորագրեմ՝

### ՀԱՆԴԻՊՈՒՄ ՔՐԻՍ ԶՈՒՏՆԻ ՀԵՏ

#### Շարունակում է կապերի մասին

անոր անձնական արժանիքները՝ որպէս տիպար ամուսին եւ հայր, եւ ապա թուեց այն իրագործումները որ ան կրցած է յաջողցնել՝ ի նպաստ քաղաքի զարգացման եւ ժողովուրդի ապրելակերպի պայմաններու բարելաւման:

Իր քաղաքապետութեան շրջանին էր որ՝ աւելցուց Պրն. Սալազար, Հոլտըն կրցաւ քաղաքապետի ընտրութիւնը մատչելի դարձնել քաղաքի բնակչութեան: Մինչ այդ՝ քաղաքապետական խորհուրդի անդամներն էին որ կը նշանակէին իրենց մէկը, որպէս քաղաքապետ:

Քրիս Հոլտըն իր կարգին պատրաստակամութիւն յայտնեց աշ-

խատիլ ի շահ ոչ թէ միայն իր ընտրաշրջանի բնակչութեան ի նպաստ, այլ հետապնդել նաեւ հայութիւնը յուզող հարցերն ու մտահոգութիւնները մայրաքաղաք Սալազար մէջ: Ան ապա մանրամասնօրէն պատասխանեց իրեն ներկայացուող հարցումներուն եւ խոստացաւ իր կարելին ընել՝ գոհացնելու բոլորը, իր կարողութեան սահմաններուն մէջ:

Հանդիպման աւարտին՝ Համագործակցի Մարմնի ատենապետ Խաչիկ Շահինեանը շնորհակալութիւն յայտնեց Քրիս Հոլտընին, իրենց առաջարկը չմերժելուն համար եւ ապա ներկայ հասարակութեան՝ որ իրենց ներկայութեամբ քաղաքը հանդիսացած էին հայասէր թեկնածուին:

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**  
 1060 North Allen Ave  
 Pasadena, CA 91107  
 Գրասենեակները վերանորոգուած  
 եւ յարմար վարձքերով  
 Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝  
 (626) 398-0506

**ՔԱՉ ՆԱՉԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**  
 Ամէն Կիրակի երեկոյեան  
 Ժամը 10:00-ից 12:30  
 Կլէնտլի 380-րդ կայանից

**ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ**  
**PALM SPRINGS ԱՐՉԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՅՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ**

Փալմ Սփրինգսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թեմիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Մանրամասների համար հեռաձայնել՝  
 (818) 246-0125

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

ՄԱՐԱԶԴ



ԱՐՏԱ ՊԱՋԱՐԵԱՆ

Խոր ցաւով կը գուժենք մեր սիրեցեալ մօր եւ մեծ մօր՝ ԱՐՏԱ ՊԱՋԱՐԵԱՆԻ մահը: Եկեղեցւոյ կարգը տեղի ունեցաւ Գանատայի Թորոնթօ քաղաքի Սուրբ Երրորդութիւն Հայց. Առաք. եկեղեցւոյ մէջ, Երեքշաբթի 4 Հոկտեմբեր, 2011ին:

Սգակիրներ՝  
Տէր եւ Տիկ. Մարթին եւ Ակաբի Պազարեան  
Արմէն Պազարեան  
Ֆիլիբ Պազարեան

ՅԱԼԱԿՑՈՒԹԻՒՆ

Յաւով իմացանք որ շաբաթաթերթիս երկարամեայ աշխատակիցներէն Մովսէս Պազարեանի այրին ԱՐՏԱ ՊԱՋԱՐԵԱՆ ոչ եւս է: Արտա Պազարեանը իր մահականացուն կնքած է 24 Սեպտեմբեր 2011ին, Քանատա: Այս տիտուր առիթով «Մասիս» իր ցաւակցութիւնները կը յայտնէ ողբացեալի հարգատներուն, ի մասնաւոր իր զաւակին Տէր եւ Տիկ. Մարթին Պազարեանին:

ՄԱՆԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

Շարունակուած էջ 16-էն

յաճախ ամբողջ մարմինով կը հպին անոնց եւ կ'ուզեն անպայման խրախուսուած ըլլալ անոնց կողմէ:

Այս տարիքին կարեւոր է, որ ծնողքը տան մէջ, իսկ ուսուցիչները դպրոցին, ուշադրութիւն դարձնել ADHD «attention deficit - hyperactivity disorder» ախտանշանին, որ աւելի յաճախ կը հանդիպի տղոց մօտ: Երեխաները կ'ըլլան չափազանց աշխոյժ, շարժուն «hyperactive», դժուար կառավարելի «impulsive», անուշադիր, կ'ունենան կեղրոնանալու դժուարութիւն: Կարեւոր է որ ճիշդ եւ ժամանակին ախտորոշուի միջոցով:

Շատ յաճախ անոնք «բժիշկ բժիշկ» կը խաղան հետաքրքրութեամբ գննելով իրար: Եթէ մայրը

նկատէ, որ երեխան կը խաղայ սեռային օրկաններու հետ, պէտք է առանց զայրանալու ըսել, որ մայրիկը չ'ուզեր, որ դուռն այդպիսի բաներ ընես եւ աշխատիլ հնարաւորին չափ շեղել անոր ուշադրութիւնը հետաքրքիր զբաղումներով:

10-15 ՏԱՐԵԿԱՆ երեխան կը թեւակոխէ արբունքի շրջան եւ արդէն երէկուան մանչուկը կամ աղջնակը կը դառնայ ուշադրութեան արժանի պատանի կամ պարմանուհի: Այս տարիքին, տղաներուն պէտք է սորվեցնել պաշտպանել աղջիկները, օգնել, տեղը գիշիլ, ճամբայ տալ: Կարեւոր է, որ այդ բնաւորութեան գիծերը անոնց մօտ ամրանան, մինչեւ որ անոնք սկսին հետաքրքրուիլ սեռային հարցերով:

ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԵՒՅԹԸ

Շարունակուած էջ 14-էն

պում: Հայոց հեթանոսական ժամանակներից անցում կատարելով քրիստոնեական հինգերորդ դար՝ իր կերպարների համակարգ է բերում Մովսէսին, որի իրական նախատիպն է բազում հակասական կարծիքներ իր վրայ կրած պատմահայր Մովսէս Խորենացին: Գրողը բարձր պոետիկացով ստեղծում է մարդու, մշակութային գործչի, հոգեւոր առաջնորդի, մեծ հայրենասէրի իդեալ-կերպարը՝ միեւնոյն ժամանակ հմուտ պատմաբանի կենսափորձով ներկայացնում հայոց համար պատմական խուժուժ ժամանակների իրական պատկերը: Արձագանքներն առաւել քան ողբերգի են լինում: Ակադեմիկոս-պատմաբան Սուրէն Երեմեանը գրում է. «Հայկ Խաչատրեանի «Քերթողահայրը» վէպի ընթերցումը ինձ համար յայտնութիւն էր: Ես ծանօթ եմ գրողի միւս պատմավէպերին: Ի պատիւ հեղինակի պիտի ասեմ, որ նա իր գեղարուեստական գրքերով նաեւ պատմութիւն է ուսուցանում եւ այդ տեսակէտով շատ նման է Վալտեր Սկոտին:

Ամենաբժախնդիր պատմաբանն էլ Հ. Խաչատրեանի վէպերում է ի կարող պատմական անձնուժութիւններ գտնել: Իր ներկայացրած դարաշրջանը նա գիտի մի լրջմիտ պատմաբանի իմացութեամբ («Գրքերի աշխարհ» ամսաթերթ, 1985, Մարտ):

Մովսէս Խորենացուն գրական նախատիպ դարձնելը եւ նրա կերպարին մարդկային անհատականացումը գծեր հաղորդելը պատահականութիւն չէր: Պատմահօր կեանքով ու գործունէութեամբ գրողը վաղուց էր հետաքրքրուած: Գրողը խոստանալու է, որ Խորենացու «Հայոց պատմութիւնը» իր սեղանի գիրքն է:

Մտերիմները վկայում են, որ Հ. Խաչատրեանն օժտուած էր տիտանական աշխատասիրութեամբ: Ինքը գտնում է, որ զօրեղ յիշողութիւնն ու եօթնասուն մարդու աշխատասիրութիւնն իրեն Արցախն է տուել: Տիտանական աշխատասիրութեամբ ու զօրեղ յիշողութեամբ է օժտուած նաեւ նրա հերոսը՝ Մովսէսը:

1987 թուականին ընթերցողների սեղանին էր գրողի «Խաչախաչ» պատմավէպը: «Խաչախաչին» յաջորդում են «Երուանդ Սակաւակեացը» (1980), «Տրդատ Մեծի խաչը» (1996), «Վաչագանը» (1998), «Գրիգոր Մագիստրոսի վերջին թուղթը» (1999): Տպագրութեան են սպասում վիպասանի «Թէժ եկեղեցին», «Հայոց աստուածների ամանորը», «Հայոց առաջին արքան» («Արամ թագաւորը»), «Կիլիկեան Հայաստանի երեւելիները», «Նեմրոթի գաղտնիքը» պատմավէպերը: Գրողի գրական ժառանգութիւնը միայն պատմավէպերով չի սահմանափակուած: Ստեղծագործական տարբեր ժամանակահատուածներում նա հրատարակել է «Վանատուր» (1978), «Հայապատում» (1984), «Սօսեաց անտառ» (1988), «Բաւր չգօրացրուող գինուր է» (1990), «Եօթնախորհուրդ» (1993), «Հնախօսարան» (1995), «Արքայապատում» (1996) պատմաշարերը: Գրողի իւրաքանչիւր գրական գործ աչքի է ընկնում իր առանձնակի պոետիկացով եւ գրականագիտական խոր վերլուծութեան ու լայնաշունչ խօս-

քի հնարաւորութիւն ընձեռում, ինչը հնարաւոր է կատարել թերթային մի յօդուածի սահմաններում:

Հայկ Խաչատրեանը միայն գրական մշակ էր: Ժամանակակիցների հաստատմամբ նա նաեւ խոհուն գիտնական էր՝ մատենագետ, տոմարագետ, տեղանունագետ: Մօտ քառասուն տարի նա աշխատել է Հայկական հանրագիտարանի խմբագրութիւնում՝ որպէս պատասխանատու քարտուղար: Նա խմբագրել, շարահիւսական պատշաճ տեսքի է բերել հարիւրաւոր յօդուածներ: Գրող-գիտնականը հանրագիտարանի խմբագրութիւնն իր համար կրթատուն է համարում, հանրագիտարանի խմբագրութիւնում աշխատելը համեմատում ասպիրանտուրայում աւարտ չունեցող սովորելու հետ:

Հայկական հանրագիտարանի գլխաւոր խմբագիր-տնօրէն Յովհաննէս Ալվազեանը գրում է. «Հայկ Խաչատրեանի գիտական նախասիրութիւնները խիստ բազմազան էին, սակայն դրանց մէջ առանձնակի տեղ էր զբաղեցնում Հայկական լեռնաշխարհի տեղանունագիտութիւնը, եւ առանց չափազանցելու պիտի ասեմ, որ նա այդ բնագաւառի եզակի մասնագէտներից է» («Գրական թերթ», 1996, Դեկտեմբեր, թիւ 45): Իսկ գրականագետ-մատենագետ Ռաֆայէլ Իշխանեանը այսպէս է արտայայտուած «Հ. Խաչատրեանի մասին». «Վերջին չորս տասնամեակների ընթացքում լոյս տեսած մատենագիտական աշխատութիւնների մէջ յատուկ կարեւորութիւն ունեն ճանաչուած պատմավիպասան Հայկ Խաչատրեանի գործերը՝ «Հայկական օրացոյցներ» եւ տարեցոյցների մատենագիտութիւն» (1976), «Մէկ ու կէս դար ուսուցիչի հետ» (1979), եւ մանաւանդ «Գրական տեղեկատու» երեք հրատարակութիւնները (1975, 1981, 1986 թթ.) ու Հայկական հանրագիտարանի 12 հատորներում կատարած մատենագիտական խմբագրական աշխատանքը»:

Գիտնական-գրողը տեսանելի է անտեսանելի բիւրաւոր թելերով կապուած էր հայրենի բնաշխարհին, իր ժողովրդի անցեալին եւ ներկային: Գրողի նրա հաւատամքը եղել է մեր ժողովրդի ազգային շահերին ծառայելը: Ըստ նրա՝ գրողի գործը պիտի նմանուի որդան կարմիրի, քանի որ այդ հրաշալի ներկը ժամանակի ընթացքում ոչ թէ խոնանում, այլ առաւել գունեղ է դառնում:

Արարման կեանքով քանի տարի էլ ապրեք, գրող-գիտնականի համար ժամանակը քիչ էր լինելու: 1996 թ. գրած ինքնահարցազրոյցում շեշտում է, որ գրելիք պատմավէպի քառասունութ սիւժէ ունի: Քառասունութից եօթը հասցրեց գիրք դարձնել, քառասունմէկը մնաց մեզ անյայտ: Գիտէր, որ չի հասցնելու. «Կեանքիս մնացած բոլոր տարիներն էլ թէ «Բոլորիկեան աշուն» դարձնեմ, չեմ հասցնի աւարտել, կը մնամ լանջի վրայ»:

Չհասցրեց աւարտել, բայց նաեւ լանջի վրայ չմնաց: Գրողի անձնական արխիւում հազարաւոր նամակներ կան, որ ստեղծագործական կեանքի ընթացքում ստացել է ընթերցողներից: Դրանք ազնիւ, անմիջական ու պարզ գնահատութիւնն են եւ ապացուցում են, որ Հ. Խաչատրեանը գրական մշակի իր հաւատամքով հայ գեղարուեստական արձակի մէջ իր անուրանալի նվաճումն ունի:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

\* \$50,00 for USA

\* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

\* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax : -----



Ճաշկերոյթ  
Պարահանդէս  
Նուիրում

Հ.Մ.Մ.ի 90 Ամեակին  
կազմակերպութեամբ

Հ.Մ.Մ.ի Շրջանային Վարչութեան

Օրուան հանդիսութիւնը պիտի խանդավառէ  
յատուկ Լիբանանէն ժամանած, սիրում երգիչ՝

Պերճ Նազգաշեան

Տեղի կ'ունենայ Շաբաթ, Նոյեմբեր 26, 2011  
երեկոյեան ժամը 8:30 Էն սկսեալ

Deluxe Banquet Hall

Շքեղ սրահէն ներս՝

237 East Olive Avenue, Burbank, CA 91502

Մանրամասնութեան համար հեռաձայնել

(626) 485-6434 (818) 324-057

Մուտքի Նուէր \$ 75.00